Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

10089

Труды

297
Р-83

280
1089-PA

04 NOV 2009

Ind. III.
No. 493.

W № 6535

Ե. ԹՈՓՉԵԱՆ

# ԽԱԼԱՐ

Պատմական պատկերազարդ տեսություն

ԹԻՖԼԻՍ
Տպ. Կ. Մարտիրոսեանցի || Тип. К. Мартиросіанца.
Орбеліановская ул. д. № 1|2.
1899

297
Թ-83

Ե. ԹՈՓՉԵԱՆ

# ԹՄԼԱՍ

Պատմական պատկերազարդ տեսութիւն

(Արտատպած **Տարազ** շաբաթաթերթից)

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱԳԱԶԻՆԱՅԻ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
именна Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպ. Կ. Մարտիրոսեանցի || Тип. К. Мартиросіанца.
Орбеліановская ул., д. № 1|2.
1899

12330

.04. 2013

10089

Дозв. цензурою. 10-го іюня 1899 г. Тифлисъ.

Գրադարան
Հայոց պետական
20533+

# ԻՍԼԱՄ

—

Աշխարհի սկզբից մինչև այժմ իւրաքանչիւր ազգ, իւրաքանչիւր ժողովուրդ ունեցել է մի որոշ դաւանանք — կրօն, որի վարդապետութեամբ նա առաջնորդուել է, որի ազդարարած դաղափարներն ուղեցոյց են դարձել կենսական այլ և այլ հարցերում: Մարդ արարածը, իբրև մի թոյլ էակ, շրջապատուած լինելով ահեղ բնութեան բազմազան արհաւիքներով, ամեն մի քայլափոխում հանդիպելով անհասկանալի, ան-

ըմբռնելի երևոյթների, բնականաբար երևակայութեամբ պիտի ստեղծէր մի կամ մի քանի գերբնական ոյժեր, որոնց գթութիւնն ու օգնութիւնն անհրաժեշտ էին կրիտիկական րոպէներում։ Ահա այդպիսով սկիզբ է առել նախնական կրօնը, որը ամեն մի երկրում համակերպւել է շրջապատող բնութեան, ունեցել է իր բնորոշ յատկանիշները։

Կրօնը մտքի, երևակայութեան, հոգեկան պահանջների արդիւնք լինելով՝ չէր կարող մնալ անշարժ ու անփոփոխ։ Նա ձևափոխւել, բարեկարգւել է նոյն չափով, ինչ չափով զարգացել է մարդու կուլտուրական կեանքը, լայնացել է մտաւոր աշխարհահայեացքը։ Նա, իբրև գլխաւոր գործօններից մէկը մեծ դեր է կատարել և կատարում մարդկային կեանքում, մեծ ազդեցութիւն է ունեցել ազգերի փոխադարձ յարաբերութեան վրայ։

Թէև բոլոր կրօնների մէջ Իսլամը գրեթէ ամենավերջինը, ամենանորն է, բայց և այնպէս ունի հարիւր միլիօնաւոր հետևողներ և զօրեղ հետքեր է թողել պատմութեան էջերում։ Մասնաւորապէս հայ ազգը իր երկրի աննպաստ տեղադրութեան, ներքին խռովութիւնների պատճառով երկար ու ձիգ դարերի ընթացքում



մեծամեծ զրկանքներ, հալածանքներ է կրել մահմեդական տարրից—Իսլամի դաւակներից։ Իբրև ապացոյց բաւական է յիշել արաբական աւերիչ արշաւանքները, մինչև օրս շարունակուող թիւրքական բռնութիւնները, բաւական է պատկերացնել թիւրքաց Հայաստանի արիւնաներկ դաշտ ու լեռները, գիւղ ու քաղաքները։ Ընդունելով այդ հանդամանքին, մեր գրականութիւնը շատ քիչ ուշադրութիւն է դարձրել Իսլամի վրայ, մեր ժողովուրդը շատ քիչ տեղեկութիւն ունի կրօնական այն վարդապետութեան մասին, որի աշակերտներն իր դարաւոր թշնամիներն են եղել։

Ահա այդ շարժառիթից դրդուած՝ մենք ներկայ գրուածքով աշխատել ենք զէթ մի համառօտ ծանօթութիւն տալ Իսլամի մասին, բաց թողնելով մանրամասնութիւնները, մասնագիտական բացատրութիւնները։

## I
## Իսլամի հայրենիքը

Իսլամի *) բուն հայրենիքը Արաբիա մեծ թերակղզին է, որը ընկած է Կարմիր ծովի,

*) Իսլամ—նշանակում է Աստծուն անձնատուր լինել։

Պարսկական ծոցի և Հնդկական ովկիանոսի մէջ տեղը և որի տարածութիւնն է 52,000 քառ. մղոն։ Արաբներն այդ թերակղզուն հազիրեs էլ արաբ անունն են տալիս, որ նշանակում է արաբների կղզի։

Այդ երկրի բնակիչները — արաբները ծագել են Ջոկտանից *), որը Սեմի (Նոյի որդի) չորրորդ սերունդն էր։ Ջոկտանի Եարաբ որդին հիմնեց Եմէնի թագաւորութիւնը, իսկ միւս որդին — Ջուրհամը հիմնեց Հեջազի թագաւորութիւնը։ Ջուրհամի ժառանգները բաւական երկար ժամանակ իշխեցին և դրանք էին, որ հիւրընկալեցին Հագարին և Իսմայէլին, երբ Աբրահամը նրանց իր տանից արտաքսեց։

Իսմայէլը ամուսնացաւ Ջուրհամեան տոհմի Մողադ իշխանի աղջկայ հետ և այդ ամուսնութիւնից ծնան 12 որդի, որոնք տէր դարձան ամբողջ երկրին և ջնջեցին — անհետացրին Եարաբի յաջորդներին... Դրանց սերունդը, հետզհետէ աճելով, տարածուեց դրեթէ ամբողջ թերակղզու վրայ և զանազան մեծ ու փոքր պետութիւններ կազմեց։ Դրանք սկզբում Իսմայէլացիներ, իսկ յետոյ արաբներ կոչուեցան, դրա-

*) Տես Գիրք Ծննդոց Մովսիսի Ժ. 25—30։



ւեցին բարեբեր հովիտները, շինեցին բազմաթիւ քաղաքներ, բերդեր և սկսեցին պարապել երկրագործութեամբ, անասնապահութեամբ ու վաճառականութեամբ։ Արաբների մի մասն էլ դերադաս համարեց թափառական կեանքը։

Բոլոր արաբները բաժանուած էին բազմաթիւ մանր ցեղերի, որոնցից իւրաքանչիւրն իր

Արաբացի

առանձին շեյխը կամ էմիրն ունէր։ Էմիրի վրանի առաջ միշտ ցցած էր լինում մի նիզակ, որ նշան էր նրա իշխանութեան։ Նրա պարտականութիւնն էր կառավարել իր ցեղը,

առաջնորդել դէպի պատերազմ, ընդունել անուանի հիւրեր և այլն և այլն։

Անապատի զաւակը – արաբացին միշտ ըստիպւած լինելով պաշտպանել իր երամներն ու հօտերը, մանկութիւնից վարժւում էր զէնք բանեցնել, ուստի նրա մէջ հետզհետէ զարգանում էր պատերազմելու ընդունակը։ Բայց չընայելով իր անհանգիստ և աւարասէր բնաւորութեանը, նա չափազանց հիւրընկալ և վեհանձն էր։ Ողորմութիւն տալը, հիւր ընդունելը, նոյն իսկ թշնամուն իր վրանի տակ պատսպարելը՝ մեծ հաճոյք էր նրա համար։

Արաբական իւրաքանչիւր ցեղ ունէր իր երկրպագութեան առարկան—կուռքը։ Շատ տարածւած էին սաբէական եւ մոգական կրօնները։ Արաբների կարծիքով սաբէութեան հիմնադիրը Սէթի որդին—Սաբին է եղել. ոմանք էլ ենթադրում էին, որ այդ Աբրահամի քարոզած կրօնն էր, որ ընդունեցին նրա արժանաւոր ժառանգները—Իսմայէլի որդիները։

Սաբէական կրօնի գլխաւոր դաւանանքն էր Աստուծոյ միութիւն, հանդերձեալ կեանք, վերջին դատաստան և անմահութիւն, որին հասնելու համար անհրաժեշտ էր առաքինութիւն։ Ժամանակի ընթացքում այդ կրօնը կորցրեց իր նախնական պարզութիւնը և խառնւեց կռապաշտութեան հետ։ Սկզբում սաբէականները հաւատացած էին, որ իւրաքանչիւր աստղի մէջ մի հրեշտակ է ապրում և այդ հրեշտակները միակ Աստծու և մարդկանց միջնորդներն են, իսկ յետոյ այդ հաւատալիքը փոխւեց. իւրաքանչիւր ցեղ սկսեց նրանց պատւին կուռքեր կանգնեցնել։



Մոգական կամ կրակապաշտների կրօնն էլ սաբէականի նման պարզ էր և ընդունում էր մի յաւիտենական Աստուած, որ ստեղծել է լոյս և բարիի հրեշտակին՝ Ահրիմանին։ Աշխարհի գործերը կարգադրելիս Որմիզդն ու Ահրիմանը շարունակ կռւում են միմեանց հետ և որը յաղթող հանդիսացաւ, նրա խօսքն էլ առաջ է գնում։ Այդ կրօնի մեծ մարգարէն էր Զրադաշտը, որ բոլոր աւանդութիւնները հաւաքեց Ջենդաւեստա կոչւող գրքի մէջ և դրանով ամփոփ գաղափար տւեց մոգական կրօնի մասին։

Հետզհետէ այդ կրօնն էլ շեղւեց իր սկզբունքից։ Նրա հետևողները սկսեցին երկրպագել կրակին, երբև աստւածութեան։ Բացի դրանցից Արաբիա մուտք էին գործել նաև քրիստոնեայ

ըլստոնէական և մուսլիմական կրօնները, որոնք սակաւաթիւ հետևողներ ունէին։

Հին ժամանակներից սկսած Արաբիայի գլխաւոր քաղաքն էր Մեկկան, որ առաջին տեղն էր բռնում թէ իր վաճառականութեամբ և թէ մարդաշատութեամբ։ Նա նշանաւոր էր նաև իբրև սրբատեղի, որովհետև իր մէջ պարունակում էր բոլոր արաբների սրբութիւնը— Քեաբէն, որը իբր թէ շինած է Իսմայէլի ձեռքով, Գաբրիէլ հրեշտակապետի օգնութեամբ։ Քեաբէն խորանարդաձև մի շինուածք է, որի մէջ զետեղած էին 360 տեսակ կուռքեր. սակայն իբրև սրբութիւն առաջին տեղն էր բռնում Սեւ քարը, որի մասին արաբական աւանդութիւնը պատմում է հետևեալը.

—Երբ Իսմայէլը, անդադար տանջելով, շարում էր Քեաբէի պատերը, այն ժամանակ երկնքից իջաւ Գաբրիէլ հրեշտակապետը և նրան մի քար յանձնեց։ Այդ քարը այն հրեշտակն էր, որը կանգնած էր դրախտում՝ Ադամի վրայ հսկելու և որը իր անհոգութեան համար Աստծու հրամանով քար էր դարձել.. Իսմայէլը երկիւղածութեամբ ընդունեց երկնքից ուղարկուած քարը և դրեց Քեաբէի դրսի պատի մէջ, ուր մնում է մինչև այժմ։ Այդ քարը սկզբում սպիտակ, յակինթանման է եղել, բայց հետզհետէ սևացել է անարժան մարդկանց համբոյրներից։ Յարութեան ժամանակ նա նորից իր նախնական գոյնը կըստանայ և երկինք կըբարձրանայ, որպէս զի վկայէ, թէ ով ինչպէս է կատարել ուխտադնացութեան ծէսերը։

Ահա այդ աւանդական հաւատն էր, որ նոյն իսկ հեռաւոր տեղերում ապրող արաբների ստիպում էր գէթ մի անգամ այցելել Մեկկան, համբուրել խորհրդաւոր Սև քարը և ջուր խմել Զէմ-Զէմ աղբիւրից, որը մի ժամանակ յաղեցրել էր իրանց նախահօր—Իսմայէլի ծարաւը։

Թէև Արաբիայի առանձնացած դիրքը և լայնատարած անապատները բնակիչներին պաշտպանում էին արտաքին թշնամիներից, օտարի լծից, բայց և այնպէս պատերազմներն անպակաս էին, որովհետև բազմազան և բազմաթիւ ցեղերի մէջ չքկար սէր, միաբանութիւն և ընդհանուր կրօնական կապ։ Այդպիսի դրութիւնը բաւական երկար տևեց, ներքին երկպառակութիւններն աւելի ու աւելի յաճախ կրկնուեցին, մինչև որ վերջապէս հասաւ այն ժամանակը, երբ անմիաբան ցեղերը մի հաւատով սիրտ կապուէին և մի դաղափարով տոգորուէին։ Հար-

կատը էր միայն մի հանճարեղ ձեռք, որ ջըլատուած անդամներն իրար հետ միացնելով, մի զօրեղ և ահարկու մարմին կազմէր: Ահա այդ ոյժը, այդ հանճարեղ ձեռքը եղաւ անապատի մեծ մարգարէն — Մահմեդը: Արաբական ցեղերին միացնող օղակը դարձաւ նրա քարոզած նոր կրօնը — Իսլամը:

## II

## Մ ա հ մ ե դ

Իսլամի հիմնադիրը — Մահմեդը ծնուել է Արաբիայի Մեկկա քաղաքում 570 թուականին: Նրա պապը՝ Աբդալ Մոթալէբը Քէաբէի վերահսկիչն էր և մեծ յարգանք էր վայելում ամբողջ Մեկկայում: Աբդալ Մոթալէբի զաւակներից մէկը—Աբդուլլահը ամուսնացաւ գեղատեսիլ Էմինայի հետ և այդ ամուսնութիւնից ծընաւ Մահմեդը: Մահմեդականների մէջ գոյութիւն ունի մի աւանդութիւն, որը պատմում է, թէ մարգարէի ծննդեան ժամանակ երկինքը լուսաւորուեց, Սէալիհը ափերից յետ ու յետ քաշուեց, Տիգրիս գետը հեղեղեց շրջակայքը, պարսից Խոսրով թագաւորի ապարանքը հիմքից ցնցուեց, աշտարակները կործանուեցան և նորածին երեխան ձեռքերն երկինք բարձրացնելով, բացականչեց.



—Մեծ է Աստուած, չկայ Աստուած բացի Աստծուց և ես նրա մարգարէն եմ:

Այդ օրանից անցաւ երկու ամիս. Մահմեդի հայրը մեռաւ և այդպիսով դեռահաս մանկիկը մնաց մօր հսկողութեան տակ: Սակայն բախտի չար հարուածը միայն դրանով չբաւականացաւ: Մի անգամ Էմինան իր վեցամեայ որդու հետ գնաց Մեդինա ազգականներին տեսնելու և վերադարձին մեռաւ: Նրան թաղեցին Աբուա գիւղի մօտ, Մեկկայի ու Մեդինայի մէջ տեղը և այդ գերեզմանը ապագայում սիրալիր ուխտագնացութեան տեղ դարձաւ Մահմեդի համար:

Որբացած Մահմեդը մնաց իր պապի—Աբդալ Մոթալէբի և հօրեղբօր—Աբութալէբի հովանաւորութեան տակ: Դրանք էին նրա դաստիարակիչները, նրա հեռադէտ միտքն ու վառվռուն երևակայութիւնը զարգացնողը: Մի կողմից դրանց ազդեցութիւնը, միւս կողմից Քեաբէ ուխտ եկող արաբների հետ ունեցած շփումը աւելի ու աւելի ընդլայնեցին Մահմեդի բնատուր ընդունակութիւնները—քննասիրական ոգին և շնորհեցին նրան մանրամասն ծանօ-

թուլթիւն արաբական ծէսերի ու հաւատալիք-
ների մասին։ Նա դեռ 12 տարեկան էր, երբ
վաճառականական գործերով հօրեղբօր հետ ըն-
նաց Ասորիք։ Այդ երկար ճանապարհորդութեան
ընթացքում նրա վառ երևակայութիւնը հա-
րստացաւ բազմազան տեսարաններով, առաս-
պելական աւանդութիւններով և արաբների
ընդհանուր պատուաստքներով... Ճանապարհին կա-
բաւանը կանգ առաւ Յորդանանի մօտ գտնուող
Բօսրա շուկայում, որտեղ նեստորականների մի
վանք կար։ Այդ վանքում Մահմեդը ծանօթա-
ցաւ Բահիրա անունով մի կրօնաւորի հետ և
իրան յատուկ հետաքրքրութեամբ սկսեց հարց
ու փորձ անել զանազան կրօնական խնդիրների
մասին։ Կրօնաւորը հիացել էր Մահմեդի քննա-
սիրութեան և խելքի վրայ և մեծ հրճուանքով
բաւականութիւն էր տալիս նրա ամեն մի հար-
ցին։ Ընդհանրապէս ամբողջ ճանապարհորդու-
թիւնը և յատկապէս այդ կրօնաւորի հետ ու-
նեցած խօսակցութիւնը մեծ չափով ազդեցին
Մահմեդի վրայ։ Մի քանի տարուց յետոյ նա
նորից այցելից Ասորիք, Եմէնը և ուրիշ հե-
ռաւոր երկիրներ։ Այդ միևնոյն ժամանակա-
շրջանում նա իր ազգականների հետ մասնակ-
ցում էր զանազան արշաւանքների և միշտ



էլ աչքի էր ընկնում իր ճարպիկութեամբ ու
քաջութեամբ։ Վերջապէս 18 տարեկան հասա-
կում նա գործակատարի պաշտօն ստացաւ մի
այրի կնոջ — Քադիջայի մօտ։ Հարկաւոր է նկա-
տել, որ մահմեդականութիւնից առաջ արաբա-
ցի կինը վայելում էր կատարեալ ազատութիւն։
Նա երեսը չէր ծածկում չադրայով, չէր ճնշւում
օտարի ներկայութիւնից և ընտանեկան ամեն
մի հարցում նոյնքան անկախ ու ինքնակամ
էր, որքան և տղամարդը։ Այդ հանգամանքի
շնորհիւ կանայք այրիանալուց յետոյ էլ կարո-
ղանում էին կառավարել որբացած ընտանիքը,
շարունակել նոյն իսկ ամուսնու առևտրական
գործերը։ Ահա այդ տեսակ կանանցից էր և
Քադիջան։

Մահմեդի առնական գեղեցկութիւնը և
մտաւոր ձիրքերը օրէցօր գրաւում էին Քադի-
ջայի սէրը... Վերջապէս բանն այնտեղ հասաւ,
որ նա ամուսնացաւ Մահմեդի հետ և այդպի-
սով վերջինս յանկարծակի մեծ հարստութեան
տէր դարձաւ։ Ամուսնանալուց յետոյ էլ Մահ-
մեդը շարունակում էր առևտրական գործերը,
բայց այլևս առաջուայ նման փող վաստակել
չէր կարողանում։ Նրա ուշքն ու միտքը շա-
րունակ զբաղուած էին կրօնական հարցերով։

Այդ ժամանակաշրջանում Մահմեդի վրայ մեծ ազդեցութիւն ունեցաւ Վարակա իբն Նաու-

Մահմեդ

ֆալ անունով մի աստղագէտ հրէայ, որը դաւանում էր քրիստոնէական կրօնը և Հին ու Նոր Կտակարանը թարգմանել էր արաբերէն: Դրանից Մահմեդը ստացաւ իր գիտելիքները Միշնուի Թալմուդի և Ս. Գրքի մասին: Որքան հարստանում էր Մահմեդի կրօնական պաշարը,



նոյնքան էլ աւելանում էր նրա զգւանքը դէպի կռապաշտութիւնը: Նա արդէն այն համոզմունքին էր եկել, թէ անհրաժեշտ է մոլորուած արաբներին ճշմարիտ ճանապարհի վրայ կանգնեցնել, քարոզելով նոր կրօն, ճշմարիտ աստուածապաշտութիւն: Այդ ցանկութիւնը գիշեր ցերեկ տանջում էր նրան: Շատ անգամ նա քաշւում էր Հարա սարի քարայրը և այնտեղ քրիստոնեայ ճգնաւորների նման շարունակ աղօթում: Նոյն իսկ քնած ժամանակ յաճախ զառանցում էր կրօնական այլ և այլ հարցերի մասին: Վերջապէս, իսլամական պատմաբանների ասելով, քառասնամեայ հասակում Մահմեդը արժանացաւ Գաբրիէլ հրեշտակապետի տեսութեանը: Վերջինս նրան մետաքսեայ մի ծրար յանձնեց և ասաց.

—Բաց արա և կարդա.

—Կարդալ չգիտեմ, պատասխանեց Մահ-

մեդը:

—Կարդա յանուն Աստծոյ, որ ստեղծեց ամեն բան. շարունակեց հրեշտակապետը. կարդա յանուն բարձրելոյն, որ սովորեցրել է մարդկանց գրիչ գործածել, որ գիտութեան լոյս է տալիս նրանց հոգուն և ուսուցանում է այն-

10 05
Գ 533
Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Հ.Ս.Հ. Публичная Б[illegible]
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԱՆՎԱՆ
7/XI 1922
имени А. Мясникяна
Գրադարան
Հանձնում
Վերադարձնում

պիսի բաներ, որպիսին նրանք առաջ չըզլուէին։

Այդ խօսքերից յետոյ Մահմեդը իր մէջ մի դերբնական ոյժ զգաց և կարդաց հետևեալը.

—Ով Մահմեդ, դու Աստծոյ մարգարէն ես, իսկ ես նրա հրեշտակապետը։

Այդ ուրախալի յայտնութեան մասին Մահմեդը խսկոյն պատմեց կնոջը, որը մեծ ոգևորութեամբ բացականչեց.

—Ուրեմն այսօրուանից դու մարգարէ ես...

Անցաւ բաւական ժամանակ։ Մի անգամ Մահմեդը քնած էր այդում, երբ հրեշտակը բացականչեց վերևից.

—Դու, վերարկուի մէջ փաթաթուածդ, վեր կաց քարոզիր, քո Արարչին փառաբանիր. սրբիր շորերդ, հեռացիր անմաքրութիւնից. բարի մի լինիր շահասիրութեան համար և միշտ ապաւինիր քո Աստծուն *)։

Հետևեալ օրուանից Մահմեդը սկսեց քարոզել նոր կրօնը. բայց հէնց առաջին քայլափոխում զօրեղ ընդդիմութեան հանդիպեց։ Երբ նա յայտարարեց, թէ ինքը Աստծուց ուղարկուած մարգարէ է, ամբոխը խսկոյն հրաշագործ-

*) Ղուրան, Սիւրա 74, այեաթ 1—7։



ծութիւն պահանջեց։ Քիչ մտածելուց յետոյ Մահմեդը տուեց հետևեալ բնորոշ պատասխանը.

—Հրաշք է՞ք պահանջում... Աստուած Մովսէսին տուել էր հրաշք գործելու շնորհքը. բայց Փարաւոնը հրաշքները հեղնեց, արհամարեց, նրան կախարդ անուանեց և այդ բոլորի համար ինքն էլ պատժուեց։ Մի՞թէ դուք էլ ուզում էք նոյն պատժին ենթարկուել։

Այդ խօսքերը թէև հանդարտեցրին ամբոխին, բայց հրաշագործութեան պահանջը ապագայում աւելի ու աւելի սաստկացաւ, ուստի Մահմեդը ստիպուած եղաւ դիմելու զանազան շինծու միջոցների, որպէս զի իր հետևողներին դրաւէ, իր խօսքն ազդու դարձնէ։ Մի անգամ քարոզելու ժամանակ Մահմեդի ուսին մի աղաւնի իջաւ, մօտեցաւ ականջին և ասպա նորից վերև բարձրացաւ։ Մահմեդն խսկոյն օգտուեց բարեբաստիկ հանդամանքից և ժողովրդին յայտնեց, թէ այդ աղաւնին Աստծոյ հրեշտակն էր, որ նորանոր մտքեր յայտնեց իր ականջին։

Մի ուրիշ անգամ նա իր մօտ բերել տուեց մի եզ և նրա եղջիւրի միջից մի ծրար հանեց, որ Ղուրանի մի գլուխն էր պարունակում։ Վերջապէս մի օր փորել տուեց դետինը, որտեղից մեղը և կաթ դուրս եկաւ։ Նա հանդիսաւոր

կերպով յայտնեց, որ Ալլահն է այդ բաները պարգևում նոր կրօնի հետևողներին իբրև նշան իր առատաձեռնութեան։

Գրեթէ իւրաքանչիւր օր Մահմեդը մի թարմ միտք, մի նորութիւն էր հաղորդում ժողովրդին և միշտ էլ իր յայտնութիւններն համեմում էր երևակայական նկարագրութիւններով։ Դրանց մէջ նշանաւոր է ժանաւանդ Մահմեդի գիշերային ճանապարհորդութիւնը Մեկկայից — Երուսաղէմ և այնտեղից «եօթներորդ երկինքը»։ Ունկնդիրների վրայ մեծ տպաւորութիւն թողեց այդ ֆանտաստիքական ուղևորութեան նկարագիրը, որի համառօտութիւնը հետևեալն է.

—Մի գիշեր Մահմեդի մօտ եկաւ Գաբրիէլ հրեշտակապետը, մեծ դժուարութեամբ արթնացրեց նրան և դուրս հանեց տանից։ Դրան առաջ կանգնած էր հրաշալի կենդանին՝ Ալ Բուրակը, որը մի ակնթարթում մեծ մարգարէին հասցրեց Երուսաղէմ։ Այստեղ Մահմեդը մի խումբ մարգարէներով (Աբրահամ, Մովսէս, Յիսուս) շրջապատուած մտաւ տաճար աղօթելու։ Աղօթքի ժամանակ նա տեսաւ իր առաջ երեք բաժակ ջրով, գինով և կաթով լցրած և յանկարծակի մի ձայն բացատրեց դրանց նշանակութիւնը. — Ջուրը՝ մովսիսական, գինին՝ քրիստոնէական, իսկ կաթը՝ իսլամական կրօնն է. եթէ նա խմէ ջուրը, կըխեղդուի իր բոլոր հետևողների հետ միասին, եթէ խմէ գինին, կ'ընկնի մոլորութեան մէջ, իսկ կաթը թէ նշան և թէ նրա բոլոր հետևողներին կըկանգնեցնէ Աստծոյ ուղիղ ճանապարհի վրայ։ Մահմեդը ի հարկէ ընտրեց կաթը։ Դրանից յետոյ Գաբրիէլ հրեշտակապետի ուղեկցութեամբ նա բարձրացաւ երկինք, որ բաղկացած էր եօթը շերտերից։ Առաջինում նրան քաղցրալուր երգերով դիմաւորեցին հրեշտակների բազմաթիւ խմբերը։ Երկրորդ երկնքում ընդ առաջ ելան Յիսուսը և Յովհաննէս Մկրտիչը, երրորդում՝ Յովսէփ Գեղեցիկը, չորրորդում նահապետ Ենովքը, հինգերորդում՝ Ահարոնը, վեցերորդում՝ Մովսէսը և եօթերորդում՝ հեղաղէմ ծերունի Աբրահամը։

Վերջապէս դրախտի միջով անց կացնելով, Մահմեդին տարան Աստծոյ մօտ։ Այստեղ Աստուած տուեց նրան մի շարք պատուէրներ և ի միջի այլոց հրամայեց օրական յիսուն անգամ աղօթք անել։ Երբ այդ բոլորից յետոյ Մահմեդը վերադառնում էր, Մովսէսը նրան նկատեց և բացականչեց.

—Ինչպէս է աղօթելը, իսկ քո ժողովուրդը

թոյլ. իսկոյն վերադարձիր Տիրոջ մօտ և խընդրիր մեղմացնել, աղօթքի չափը պակասեցնել։

Մահմեդը լսեց այդ խորհուրդը և վերջ ի վերջոյ Աստծուց թոյլտուութիւն ստացաւ օրական միայն հինգ անգամ աղօթել։ Դրանից յետոյ նա միևնոյն ճանապարհով վերադարձաւ Մեկկա իր բնակարանը։

Ահա այդպիսի երևակայական, բայց միևնոյն ժամանակ խորիմաստ յայտնութիւնների շնորհիւ նոր վարդապետութիւնը աւելի և աւելի ստւարացնում էր իր հետևողների թիւը։ Բայց անձնուէր Քաղիջայի և Մահմեդի հզօր հովանաւորի — Աբու Թալէբի մահից յետոյ Իսլամի բախտը Մեկկայում նսեմանալ սկսեց։ Մահմեդի թշնամիների մէջ ամենագլխաւորն էին Կորէյշեան տոհմի ժառանգները։ Իրանց նիւթական և բարոյական շահերը պաշտպանելու համար դրանք ամեն կերպ աշխատում էին նոր վարդապետութեան առաջն առնել և կռապաշտութեան վարկը բարձրացնել։ Վերջապէս դրանք դաւադրութիւն կազմեցին Մահմեդին սպանելու համար. սակայն այդ լուրը ժամանակից շուտ լսացուեց, Մահմեդը Աբուբէքրի և իր միւս հաւատարիմների հետ փախուստի դիմեց և դրանով իր կեանքն ազատեց։



Փախստականները երեք օր մնացին Մեկկայի մօտ գտնուած Թոր լեռան քարայրում և ապա գնացին Մեդինա։ Մահմեդի փախուստը կամ Հիջրան պատահեց 622 թ. — մահմեդականներն այդ ժամանակուանից են հաշուում իրանց տարեթիւը։

Մեդինայի բնակիչներից շատերն իսկոյն ընդունեցին Իսլամը և դրանից յետոյ Մահմեդի բախտի անիւը շարժուեց առաջ ու առաջ։ Ամեն տեղ նա իրան յատուկ ճարպիկութեամբ ուսումնասիրում էր ամբոխի թոյլ կողմերը և իր քարոզներն յարմարեցնում տիրող հանգամանքներին, սոցիալական պայմաններին։ Սկզբում նա իրան զէնք էր ընտրել խօսքը, բայց երբ նրա հետևողները բազմացան, երբ մահմեդականութեան սերմերը տարածուեցին Արաբիայի շատ անկիւններում, այն ժամանակ նա աւելի ազդու միջոցի դիմեց և սուրը իբրև հաւատի դրծիք հրատարակեց։ Մարդասէրի դերութիւնը դրանով փոխուեց։ Համեստ քարոզչից նա մի ահող զօրութեան քաջարի առաջնորդ դարձաւ։

Արաբիայի կռապաշտ ցեղերը դիւրութեամբ ընդունեցին նոր կրօնը, որ գրգռում էր նրանց կրքերը առատ աւարի յոյսերով և ֆանտաստիկական դոյներով պատկերացնում հանդեր-

ձեալ կեանքը՝ հուրիների աշխարհում։ Մահմեդը մի քանի տարի շարունակ արշաւանքներ էր գործում թշնամի ցեղերի դէմ և նրանց ստիպում ընդունել Իսլամը։ Նրա հաւատարիմ աշակերտները մէկ-մէկ փորձառու զօրավար էին դարձել և մեծ հռչակ ստացել ամբողջ Արաբիայում։ Իր երկրի սահմաններն ընդարձակելիս Մահմեդը ընդլայնում էր և իր պետական դիտումները։ Անհրաժեշտ դէպքում նա հրամայում էր սրով տարածել իր վարդապետութիւնը, բայց դիւանագիտական հաշտ միջոցներն էլ անտես չէր թողնում։ Նա զգում էր իր ոյժը և ամենքի հետ վարւում էր իբրև վեհապետ, իբրև ինքնակալ իշխան։ Կրօնի ծաւալման հետ միասին քայլ առ քայլ առաջ էր ընթանում և նրա աշխարհական զօրութիւնը։ Ղուրանի պատւիրանները նա մեծ մասամբ յարմարեցնում էր շրջապատող հանգամանքներին, սակայն աւելի նախապատիւ էր համարում իր անձնական շահերն ու դիտումները։ Օրինակ՝ նա սկզբում կողմնակից էր միակնութեան, բայց երբ կարիք զգաց մի քանի կին ունենալու, այն ժամանակ հրատարակեց Ղուրանի մի սուրան և թոյլատրեց բազմակնութիւնը։ Սկզբում արաբացի կանայք բոլո-



բովին ազատ-համարձակ մանէին դալիս և խօսակցում տղամարդկանց հետ, բայց երբ կասկածներ ծագեցին թէ Մահմեդի Այիշէ կինը դաւաճանել է ամուսնուն և յարաբերութիւն ունեցել ուրիշի հետ, այն ժամանակ մեծ մարդարէն բոլոր կանանց հրամայեց տանը փակուած մնալ, օտար տղամարդկանց հետ չբխօսակցել և երեսները շղարշով ծածկել։ Ճատ հասկանալի է, որ մի այդպիսի ճկուն կրօն, որ գիտէր իր հետևողների աշխարհային պահանջների համեմատ կերպարանափոխուել, արագութեամբ պիտի տարածուէր։ Եւ այդպէս էլ եղաւ։ Մահմեդը սկսեց քարոզել 612 թ., Մեկկայից փախաւ 622 թ., իսկ մեռաւ 632 թ., թողնելով բազմաթիւ մահմեդականներ, դրեթէ կազմակերպուած իսլամական մի պետութիւն, որը յետոյ հսկայական քայլերով շարունակեց յաղթական արշաւանքները։ Մեռնելուց առաջ նա իր մոլեռանդ հետևողներին պատւիրեց. ա) Արաբիայից հալածել բոլոր կռապաշտներին. բ) հների հետ հաւասար իրաւունք տալ նորադարձներին. գ) Մշտապէս աղօթք անել։

Մահմեդի մահուան պատճառը նրա աղախին Կայբարի տուած թոյնն էր։ Նրան թաղե-

ցին Մեղինայում՝ մզկիթի մէջ, որը մինչև օրս էլ ուխտատեղի է ջերմեռանդ մուսլիմների համար։

Մեռաւ «մեծ մարգարէն», բայց նրա աշակերտները շարունակեցին սկսած գործը։ Մի քանի տարուց յետոյ Իսլամը արդէն բոյն էր դրել թէ Ասիայում, թէ Եւրոպայում և թէ Աֆրիկայում։ Ներկայումս ամբողջ մարդկութեան գրեթէ մէկ եօթերորդ մասը (մօտ 200 միլիոն) *) դաւանում է մահմեդականութիւն, որ դեռ այժմ էլ տարածւում է վայրենի ցեղերի մէջ։ Մահմեդականներն ապրում են դլխաւորապէս հետևեալ երկրներում.

— Ռուսիայում — 11,000,000, Թիւրքիայում — 17,700,000 (որից 2,300,000 Եւրոպական Թիւրքիայում, իսկ 15,400,000 ասիակ. Թիւրքիայում), Պարսկաստանում, Բէլուջիստանում և Աւղանիստանում ի միասին — 13,000,000, Բուխարայում և Խիւայում — 3,200,000, Բուլղարիայում, Ռումինիայում,

*) Ծանօթ. — Ամբողջ աշխարհում կան՝ 450,000,000 քրիստոնեաներ, 500,000,000 բուդդայականներ, 146,000,000 բրամինականներ, 245,000,000 ֆետիշներ և 8,000,000 մովսիսականներ։



Սերբիայում, Յունաստանում, Բոսնիայում և Հերցոգովինայում ընդամենը՝ 13, 00,000, Հնդկաստանում և բրիտանական միւս հողերում — 14,00,000, Չինաստանում — 4,000,000, Սուդանում 25,000,000 և Աֆրիկայում — 28,000,000։

Վերոդրեալ թուերն արդէն ցոյց են տալիս, թէ Իսլամը որքան աջողութիւն է ունեցել, որքան խոր արմատներ է ձգել աշխարհի այլ և այլ կողմերում։ Սակայն այդ աջողութեան պատճառ են եղել ոչ թէ վեհութիւնն ու մաքրութիւնը, այլ արևելեան ազգերի վառ երևակայութիւնը և բնատուր հակումներին համապատասխան խոստումները, հուր և սուր քարոզող պատուէրները, որոնց մասին դաղափար կարող է տալ Ղուրանը։

## III

## Ի՞նչ է քարոզում Ղուրանը

Գրեթէ ամբողջ մահմեդական կրօնը ամփոփուած է Ղուրանի մէջ։ Ղուրանը, որ իր անունն ստացել է արաբական «կորա» (ընթերցանութիւն) բառից, մի ժողովածու է զանազան քարոզների, դատողութիւնների և պատգամների։ Մահմեդը միշտ իր մօտ պահում

էր քարտուղարներ և մերթ ընդ մերթ թելադրում նրանց Ղուրանի սուրաները, որ գրում էին մագաղաթի, քարի և այլ բաների վրայ։ 645 թուականին խալիֆ Օմարի յանձնարարութեամբ Զայդ բէն Սաբէտը, Սրդուլլահ բէն Զիւբեարը, Սայիդ բէն ալ Ասուն և Աբդուռահման բէն Հարիսը այդ բոլորը հաւաքեցին միատեղ և կազմեցին Ղուրանը, որի մէջ ոչ նիւթերի պատշաճաւոր ընտրութիւն կայ և ոչ էլ գոնէ ժամանակագրական կարգ։ Այդտեղ պատահում են մանրամասն պատուիրաններ թէ ինչպէս պէտք է աղօթել, ուտել, խմել, հագնուել և աշխարհային կեանք վարել։ Մի խօսքով Ղուրանը մահմեդականների համար կրօնական-քաղաքացիական օրէնքների մի խառնիճաղանճ հաւաքածու է։

Ղուրանում Մահմեդն ասում է, որ ինքը նոր կրօնի քարոզիչ չէ, այլ հնի վերականգնիչ։ «Իսլամը, ասում է նա, Նոյի, Աբրահամի, Մովսէսի, Յիսուսի կրօնն է *)...» Իսկ մի ուրիշ զլխում աւելացնում է. «ասա, մենք հաւատում ենք Աստծուն և այն բանին, ինչ որ նա ուղարկել է մեզ, ինչ որ բացայայտել է Աբրա-

*) Ղուրան 42 սուրա, 11 այեաթ։



համին, Իսմայէլին, Իսահակին և նրանց ժառանգներին։ Հաւատում ենք Ս. Գրքերին, որ երկնքից ստացել են Մովսէս, Յիսուս և միւս մարգարէները։ Մենք տարբերութիւն չենք դնում դրանց մէջ և հպատակ ենք Տիրոջ կամքին *)...»

Մահմեդականութեան հիմնաքարն է կազմում Աստծու միութիւնը. «չկայ Աստուած բացի Աստծուց և Մահմեդը նրա մարգարէն է», ասում է Ղուրանը։ Բացի դրանից, նա պատուիրում է հաւատալ նաև հրեշտակներին կամ ոգեսաւոր ոգիներին, մարգարէներին, մարմնի յարութեանը, վերջին դատաստանին և ճակատագրին։ Նրա դեղեցկահիւս աւանդութիւնները հրեշտակների, մարգարէների, չար և բարի ոգիների մասին քաղուած են մեծ մասամբ Ս. Գրքից և հրէական Միշնուից ու Թալմուդից։

Մահմեդը վախենում էր, թէ իր հետևողները նորից կռապաշտութեան մէջն ընկնեն, ուստի արգելեց նրանց պարապել գեղարուեստով, օր. քանդակագործութեամբ, նկարչութեամբ, որովհետև դրանց արտադրած առարկաները որոշ չափով առընչութիւն ունէին կուռքերի հետ։

— Ո՞վ հաւատացեալներ, գինին, արձան-

*) Ղուրան 3 սուրա, 78 այեաթ։

ները, վիճակ բաց անելը սատանայի գործեր են. հեռու մնայէք դրանցից, որպէս զի բախտաւոր լինիք, ասում է Մահմեդը *). իսկ մահմեդականների աւանդութիւնը դրա վրայ աւելացնում է.

«Երաժշտութիւն լսելը մեղք է և օրինազանցութիւն, նրանով պարապելը—անբարոյականութիւն, իսկ նրանից բաւականութիւն ստանալը—անհաւատութիւն:

Հարկաւոր է նկատել, որ զուրանում պատահում են նաև շատ մարդասիրական պատգէրներ, ինչպէս օրինակ հետևեալները.

—Ուրիշին անիրաւութիւն մի անիր, որ քեզ էլ նոյնը չ'անեն: Եթէ պարտապանը դժուարանում է պարտքը վճարել, պարտատէրը պէտք է կամ սպասէ կամ բոլորովին ընծայէ իբրև ողորմութիւն: Օգուտ մի քաղիր ուրիշի նեղ դրութիւնից՝ նրանից շահով բան դնելու համար, այլ թեթևացրու նրա վիճակը: Կերակրիր սովածին, այցելիր հիւանդին և աղատիր կալանաւորին, եթէ անմեղ է: Արհամարանքով մի նայիր ընկերիդ, մի էլ զոռոզաբար քայլիր,

*) Սուրա 5, այեաթ 92։



որովհետև Աստուած չի սիրում յանդուգններին և մեծամիտներին...

Իսլամական կրօնը բաժանւում է երկու մասի՝ ա) հաւատ և բ) ծէս: Հաւատը բաղկացած է հետևեալ 6 մասերից: Հաւատալ՝ 1) Միակ Աստծուն. 2) նրա հրեշտակներին. 3) նրա գրքին կամ զուրանին. 4) մարգարէներին. 5) յարութեան և վերջին դատաստանին և 6) նախասահմանութեան կամ ճակատագրին:

Հաւատալ միակ Աստծուն. դրանով Մահմեդը ուսուցանում է թէ էր և յաւիտեան կը-լինի մի Աստուած—Արարիչ ամենայնի որ միակ է, անփոփոխ, ամենագէտ, ամենակարող և ամենաողորմ... «Լա իլահա ֆիլլ ալլահ, Մուհամմեդին rուսուլ Ալլահ», այսինքն «Չկայ Աստուած բացի Աստծուց և Մահմեդը նրա մարգարէն է». ահա այդ է իւրաքանչիւր մահմեդականի նշանաբանը. օրական հինգ անգամ այդ է լսում իւրաքանչիւր մզկիթի դաղաթից—մուէզզինի բերանից:

Հաւատալ հրեշտակներին. զուրանը ասում է, որ մարդիկ ստեղծուած են հողից, իսկ հրեշտակները կրակից. հրեշտակները ապրում են երկնքում և սպասաւորում ամենակարող Աստծուն: Նրանք անմեղ են, չափազանց զե-

ղեցիկ և մշտապէս երիտասարդ, թէև միւս արարածների նման վերջ ի վերջոյ պիտի մեռնեն։ Հրեշտակների պարտականութիւնն է հրամայել մարդկանց, արձանագրել նրանց գործերը և այդ մասին հաշիւ ներկայացնել ամենաբարձրեալին։

Հաւատալ ղուրանին. Մահմեդը պնդում է, որ իր աւանդած օրինագիրքը կամ ղուրանը ճիշտ այն գրքի պատճէնն է, որ արձանագրուած է երկնային տախտակների վրայ։ Նրա ամբողջ բովանդակութիւնը Դաբրիէլ հրեշտակապետն է արտագրել և իրան հաղորդել... Այդ պատճառով էլ իւրաքանչիւր մահմեդական խորին երկիւղածութեամբ հաւատում է ամեն մի խօսքին։ Նա երդւում է ղուրանով և մանկութիւնից սովորում կարդալ այդ ս. գիրքը, թէև առանց հասկանալու բովանդակութիւնը։ Թէ տաճիկների և թէ պարսիկների դպրոցներում ամենագլխաւոր դասագիրքը ղուրանն է։ Մահմեդն ասում է, որ Աստուած զանազան ժամանակներում իր մտքերը յայտնել է մարգարէների միջոցով, ուստի և պիտի հաւատալ դրանց գրած գրքերին։ Ղուրանի ասելով ս. գրքերը ընդամենը 104 հատ են. այսինքն 10 Ադամի, 50 Սէթի, 30 Ենովքի, 10 Աբրահամի, իսկ մնացած 4-ն են՝ Հին Կտակարան, Սաղմոս, Աւետարան և Ղուրան, որոնք գրուել են Մովսէսի, Դաւթի, Յիսուսի և Մահմեդի ձեռքով։ Սակայն ս. գրքերի մէջ գլխաւորը Ղուրանն է, որովհետև նա գրուած է բոլորից յետոյ, ամենամեծ մարգարէի ձեռքով և իր մէջ պարունակում է Աստուծոյ պատուիրանների կատարեալ լրացումը--կնիքը։

Հաւատալ մարգարէներին. Ղուրանի ասելով մարգարէները բազմաթիւ են, բայց ամենից մեծը, ամենից գլխաւորն է միայն Մահմեդը, որ ուղարկուած էր մոլորուած մարդկութեանը ճշմարիտ կրօն քարոզելու։ Բոլոր մարգարէներն էլ, ասում է ղուրանը, եղել են հասարակ մահկանացուներ, կերել, խմել, ամուսնացել, ապրել և մեռել են միւս մարդկանց նման։ Տարբերութիւնը միայն այն է եղել, որ Աստուած նրանց հովանաւորել է և նրանց բերանով է իր կամքը յայտնել։

Հաւատալ յարութեան եւ վերջին դատաստանին. Այդ նիւթի մասին խօսելիս Մահմեդը քրիստոնէական դաւանանքի մի քանի մասերը խառնել է արաբական հրէաների մէջ ընդունուած կարծիքների հետ։ Նրա ասելով յարութիւնից առաջ տեղի կ'ունենան հետևեալ

նշանները. լուսինը կը խաւարի, սուտ քրիստոսը կամ նեռը (Մեսիէ էլ տէճճալ) երևան կը գայ. արեգակը արևմտքից կը ծագէ, արիւնահեղ պատերազմներ կը լինեն, ամբողջ մարդ՝ լութեան մէջ սարսափելի իրարանցում-խառնակութիւն առաջ կը գայ, այնպէս որ իւրաքանչիւր մարդ մեռելների հանդստութեանը նախանձելով, կը բացականչէ՝ «երանի թէ ես էլ գերեզմանում լինէի»: Սոսկալի օրւայ վերջին ահեղ նշանը կը լինի Իզրաֆիլ հրեշտակի փողի ձայնը, որի հնչիւնից երկիրը կը սասանի, դղեակները և աշտարակները փուլ կը գան, լեռները դաշտերի հետ կը հաւասարուեն, արևը, լուսինը և աստղերը ծովը կը թափուեն, մարդկային ազգը կը զարհուրի, եղբայրը եղբօրից կը փախչի, մայրը որդուց, ամուսինը՝ ամուսնուց, բոլոր գազանները և կենդանիները վախից կը մոռանան իրանց թշնամութիւնը և մի երամ կը կազմեն...

Փողի երկրորդ ձայնը լսելիս՝ հրեշտակները, դևերը, մարդիկ, անասունները՝ մի խօսքով բոլոր կենդանի արարածները կը մեռնեն՝ բացի Աստծոյ խնայած սակաւաթիւ ընտրեալներից: Բոլորից յետոյ կը մեռնի մահուան հրեշտակը – Ազրայիլը:



Վերջապէս կը լսուի փողի երրորդ հնչիւնը և դա կը լինի կոչ դէպի ահեղ դատաստանը: Այդ հնչիւնը լսելուն պէս՝ ամբողջ տարածութիւնը կը լցուի մեռելների հոգիներով, երկիրը կը պատռուի, նրա միջից դուրս կը գան դիակները, կը միանան հոգիների հետ և այդ բոլորից յետոյ կը գնան հաշիւ ներկայացնելու թէ ինչպէս են կեանք վարել, ինչ գործեր են կատարել: Գաբրիէլ հրեշտակապետը առանձին կշեռքով կը կշռի իւրաքանչիւր մարդու բարի և չար գործերը և ապա բազմութիւնը կը գնայ Մահմեդի առաջնորդութեամբ Ալ-Սերաթ կամուրջն անցնելու: Այդ կամուրջը սրի ծայրի նման նուրբ է և ձգւած է անդնդախոր ջեհէնդեմի վրայ: Անհաւատները և մեղաւոր մուսլէմները խաւարի մէջ խարխափելով կ'ընկնեն անդունդ-դժոխքը, իսկ ուղղափառ և արդար մուսլէմները թռչունի նման միւս կողմը կը թռչեն և կը մտնեն արքայութիւն-ջեննաթը:

Ղուրանի նկարագրած ջ'հեննամը կամ դժոխքը մի այնպիսի սարսափելի տեղ է, որ երևակայել անկամ չի կարելի. այդտեղ ծառերի վրայ ճիւղերի փոխարէն օձեր են գալարւում և պտուղների փոխարէն դևերի գլուխներ բուսնում: Թշւառ մեղաւորները պիտի այրւեն

կրակով և եվ դան եռացող ջրի մէջ։ Նրանց կերակուրը պիտի լինի փուշ ու տատասկ։ Դրախտը կամ ալ ջեննաթը դրա կատարեալ հակապատկերն է ներկայացնում։ Դա մի հրաշալի այգի է, ուր հոսում են բիւրեղի նման մաքուր գետերը՝ երանելի արդարներին կաթ, գինի և մեղր մատակարարելով, ուր բուսնում են հաղարաւոր տեսակ ծառեր, ծաղիկներ, մրգեր, պտուղներ, ուր ճանապարհները ծածկուած են մարգարտով ու անուշաբոյր ծաղիկներով, ուր օդը լի է Իզրաֆիլ հրեշտակի քաղցրանուագ դաշնակներով և եղեմական կոյսերի երգով... Ջեննաթի երջանիկ բնակիչները հագնում են ականակուռ զգեստներ և ոսկեայ թագեր, ապրում են հոյակապ պալատներում կամ մետաքսէ վրաններում։ Նրանցից իւրաքանչիւրն հարիւրաւոր սպասաւորներ—ծառաներ ունի։ Եւ այդ երջանկութեան լրացումն են կազմում սեւաչեայ, մշտագեղ կանայք—հուրիները։ Ամեն մի հաւատացեալ 72 այդպիսի հուրիներ կունենայ և որպէս զի այդ երանելի աշխարհի բազմաթիւ բարիքները վայելել կարողանայ, նա դրախտ կըմտնի 30-ամեայ ամենառոյգ տղամարդու հասակով և երբէք չի ծերանայ...



Հաւատալ նախասահմանութեան կամ հակատագրին.—Մարդկանց ոչ մի դժբախտութիւն չէր պատահիլ, եթէ նախասահմանած չըլինէր, ասում է Ղուրանը և իւրաքանչիւր մահմեդական դեռ մանկութիւնից հաւատում է, որ ծնուած օրից արդէն որոշուած է, թէ ով ինչքան և ինչպէս պիտի ապրի և ինչ մահով պիտի մեռնի։

«Ալլահ ալէմ—Աստուած գիտէ», կրկնում է մահմեդականը ամեն մի դէպքում։ Նախասահմանութեան հաւատալը ոչ միայն վնասում է առողջութեանը, այլև փչացնում է 'բարոյապէս և վարժեցնում լինել ծոյլ և անհոգ, որովհետև թէ աղքատութիւն, թէ հարստութիւն, թէ հրդեհ և թէ հիւանդութիւն՝ այդ բոլորն էլ նախապէս որոշուած են Աստծոյ կամքով, հետևապէս իզուր են մարդու ջանքն ու աշխատանքը։ Ճակատագրին հաւատալը, վնաս հասցնելով մահմեդականների քաղաքակրթութեանը, միւս կողմից մեծ ծառայութիւն է մատուցանում պատերազմի դաշտում...

Այդ հաւատն է, որ վճռողականութիւն և հերոսական արիութիւն է ներշնչում թէ տաճիկներին և թէ բոլոր միւս մահմեդականներին։ Եւ մի՞թէ մահմեդականը կարող է այլ

կերպ վարել, երբ հաստատ հաւատացած է, որ թէ տան մէջ և թէ պատերազմի դաշտում իրան ոչ մի վտանգ չի պատահիլ, եթէ նախապէս որոշուած չէ։ Մինթէ նա կարող է ջերմեռանդութեամբ չկռուել, երբ յաղթելիս մեծ աւար պիտի ստանայ, իսկ սպանուելիս՝ արքայութիւն և բազմաթիւ հուրիներ։

Ինչպէս վերևում ասացինք, իսլամական կրօնի երկրորդ մասը ծէսն է. նա բաղկացած է հետևեալ բաժիններից.

Աղօթք. Ղուրանը շատ մեծ նշանակութիւն է տալիս աղօթքին և մանրամասն կերպով որոշում է, թէ աղօթողը ինչ դիրք պիտի բռնէ և ինչպէս աղօթէ։ «Մարմնի մաքրութիւնը հոգու մաքրութեան նշան է», ասում է նա և բոլոր մահմեդականներին պարտաւորեցնում աղօթքից առաջ լուացուել։ Իւրաքանչիւր հաւատացեալ պարտաւոր է օրական հինգ անգամ աղօթել՝ երեսը Քէաբէ, այսինքն դէպի Մեկկա դարձրած։ Մահմեդականներին աղօթելու համար մուէզզինը մզկիթի ծայրից ամեն օր պարբերաբար հնչեցնում է մեկամաղձոտ «ազանը».—Մեծ է Աստուած (կրկնում է չորս անգամ)։ Ես վկայում եմ, որ չկայ Աստուած, բացի Աստծուց (2 անգամ)։ Ես վկայում



եմ, որ Մուհամմեդը նրա մարգարէն է (2), Եկէք աղօթելու (2), եկէք փրկութեան տաճարը։ Մեծ է Աստուած (2)։ Չկայ Աստուած բացի Աստծուց և Մուհամմեդը նրա մարգարէն է»։

Այդ հրաւէրը պատշաճաւոր արձագանք է գտնում, մզկիթը լցում է ջերմեռանդ մուսլէմնելով։ Աղօթողները շշնջալով կրկնում են Ղուրանի առաջին գլուխը, որ ամենայն իրաւամբ մահմեդականների «Հայր մերն» է համարւում։ Ահա դրա բովանդակութիւնը.

—Յանուն ամենաողորմ, ամենազութ Աստծոյ՝ փառք Աստծուն։

—Աշխարհների Արարչին, որ է ամենաողորմ, ամենազութ, և հրամայող դատաստանի օրւան։ Քեզ ենք երկրպագում և քեզանից օգնութիւն հայցում։ Առաջնորդիր մեզ ուղիղ ճանապարհով, որով ընթացել են քեզանից բարերարուածները. մի տանիր քո բարկութեանը արժանացած մոլորեալների ուղիով»։

Դրա հետ միասին մերթ ընդ մերթ կրկնում են նաև հետևեալ խօսքերը. «Ալլահ աքբար...—մեծ է Աստուած»... Կանայք իրաւունք չունեն մզկիթում տղամարդկանց մօտ կանգնելու, որովհետև դրանով կարող են դրա-

ւել բարեպաշտների ուշադրութիւնը և նրանց մեղքի մէջ ձգել։ Այդ պատճառով իւրաքանչիւր մզկիթում կանանց համար առանձին բաժին կայ շինած։

Ողորմութիւն. Ղուրանը ողորմութիւն բաժանում է երկու մասի — զէկատ կամ օրէնքով սահմանուած տասանորդ և սեդակատ, այսինքն կամաւոր ողորմութիւն։ Կարօտեալներին ողորմութիւն տալով ամեն մի մահմեդական կարող է իր համար հարթել — նախապատրաստել ջեննաթի ճանապարհը։

Պահք. Իւրաքանչիւր մահմեդական պարտաւոր է տարին երեսուն օր, այսինքն Ռամազան ամսին արևի ծագելուց մինչև մայր մտնելը խստիւ հրաժարուել ուտել-խմելուց, լողանալուց, կանանց հետ մերձաւորութիւն ունենալուց և ուրիշ վայելքներից։ Դրանով նա կրմաքրէ իր հոգին, կարժանանայ մարգարէի խնամքին։

Ուխտագնացութիւն. Ամեն մի մահմեդական պէտք է գոնէ մի անգամ ուխտ գնայ Մեկկա, Մեդին կամ իր տեղն ուրիշին ուղարկէ։ Երկրորդ դէպքում ուխտադնացը պարտաւոր է աղօթքի մէջ միշտ յիշել իրան ուղարկողի անունը։ Ուխտադնացութեան սովորութիւնը վերցրած է կռապաշտ արաբներից և կա-



տարւում է ճիշտ նրանց ձևով։ Ուխտ գնացողը պէտք է ճասապարհին չբվիճէ ոչ ոքի հետ, հեղութեամբ համբերէ ամեն նեղութեան, նպաստէ ուղեկիցների մէջ հաշտութիւն, մտերմութիւն պահպանելուն և առատ ողորմութիւն բաժանէ։

Մեկկա հասնելուն պէս՝ նա իսկոյն պէտք է գնայ Քեաբէ (մէջիտ իւլ էհրամ) — Բաբ էլ Սալամի դռնով, համբուրէ սեւ քարը, եօթ անդամ պտոյտ անէ Քեաբէի շուրջը, այնուհետև գնայ Մակամ, այսինքն Աբրահամի սարը, որտեղ նահապետն ուզեցաւ իր որդուն զոհ անել Աստծուն. ջուր խմէ Զէմ-Զէմ աղբիւրից, աղօթէ Զէֆա բլրակի վրայ, կատարէ Զաա կոչւող ս. ճեմքը և այդ բոլորից յետոյ առաջին պատահող սափրիչի մօտ գնալով, սափրէ գլուխը, կտրել տայ եղունգները, և մազերն ու եղունգները այդ նպիրական հողի մէջ թաղէ։ Դրանով կրվերջանայ ուխտագնացութեան ամբողջ ծէսը։

## IV

## Ճրնադ կամ սրբազան պատերազմ

Ղուրանում բաւական մեծ տեղ են բռնում այն պատուէրները, որոնք բնորոշում են մահմեդականների վերաբերմունքը դէպի այլակրոն-

ները, որոնք որոշ չափով նպաստել են իսլամի շուտափոյթ տարածմանը։ Մենք դիտմամբ այդ հարցերին առանձին գլուխ ենք նուիրում, որպէս զի հրաւիրենք ընթերցողների ուշադրութիւնը։ Իսլամը սկզբում հիմնուած էր հեղութեան և մարդասիրութեան վրայ։ Մեկկայում եղած ժամանակ Մահմեդը հակառակ էր բռնի կիրպով կրօնը տարածելուն։ «Կրօնների մէջ ինչ հարկաւոր են ստիպողական միջոցներ»... Հոգին կարող է հաւատալ միայն Աստծու կամքով [1]), ասում էր նա, իսկ քրիստոնեաների մասին առանձնապէս պատուիրում էր. «Ս. Գիրքը կարդացողների հետ միայն լաւ բաների մասին վիճիր և եթէ պատահի սխալամիտը, ասա մենք հաւատում ենք այն ամենին, ինչ որ ուղարկել է Աստուած, թէ ձեր և թէ մեզ համար. ձեր և մեր Աստուածը մէկ է, մենք հնազանդ ենք նրան» [2])։ Սակայն երբ նորադարձները բազմացան, երբ Մահմեդի շուրջը մեծաթիւ զինաւարժ մարդիկ հաւաքուեցան և նա զգաց, որ կարող է արդէն հեղութեան, համբերատարութեան քողի տակից դուրս գալ և ուժով գործել.

[1]) Ղուրան, 10 սուրա 100 այեաթ.
[2]) » 29, 45.



այն ժամանակ մի համարձակ քայլ արեց և նոր կրօնը սրի և բռնութեան կրօն դարձրեց։

—Կռուեցէք անհաւատների հետ, ասում է Ղուրանը, մինչև որ վերջանայ մոլորութիւնը և ամեն տեղ հաստատուի ձեր կրօնը [1])... անհաւատներին պատահելիս սպանեցէք, գլխատեցէք մինչ որ բոլորովին ոչնչանան։ Գերիներին պահեցէք պինդ շղթայած [2])... Մարդարէ, նախանձախնդրութեամբ կռուիր անհաւատների կեղծաւորների հետ և եղիր դաժան ու անդութ նրանց վերաբերմամբ։ Գեհենն է նրանց բնակարանը [3])։

Այդ միևնոյն հարցը աւելի բնորոշ դոյներով պարզում է Մահմեդի հրատարակած հետևեալ հրովարտակը.

Աստուած դանդաղ մարդարէներ ուղարկեց իր պէսպէս յատկութիւնները քարոզելու համար. Մովսէսը նրա զթութիւնն ու խնամատարութիւնը փառաբանեց, Սողոմոնը՝ նրա իմաստութիւնը, մեծութիւնը և փառքը, Յիսուսը ար-

[1]) Ղուրան 8, 40.
[2]) » 47, 4.
[3]) » 9, 74 և 66,9.

դարութիւնը, ամենագիտութիւնը և զօրութիւնը — արդարութիւնը՝ իր սուրբ վարքով, ամենագիտութիւնը՝ մարդկային սրտի գաղտնիքներն իմանալով և զօրութիւնը՝ իր գործած հրաշքներով։ Սակայն այդ յատկութիւններից ոչ մէկը բաւական չեղաւ մարդկանց համոզելու համար։ Նոյնիսկ Մովսէսի և Յիսուսի հրաշքները անհաւատ մեկնութիւն ստացան։ Ահա այդ պատճառով ես ուղարկուած եմ սուսերով։ Իմ վարդապետութեան քարոզիչները ոչ փաստերի թող դիմեն և ոչ համոզման, այլ սրով կոտորեն այն մարդկանց, որոնք չեն հնազանդվիլ իսլամի օրէնքին։ Ճշմարիտ հաւատի համար մարտնչողը թէ յաղթելու և թէ սպանուելու դէպքում փառաւոր վարձատրութիւն կստանայ... Սուրը երկնքի բանալին է։ Ով որ մերկացնէ նրան յանուն հաւատի, նա մեծամեծ բարիքներով կըվարձատրուի. նրա սրեան ամեն մի կաթիլը, ամեն մի չարչարանքն ու վտանգը երկնքում աւելի ընդունելի կըհամարուի քան թէ պահքն ու աղօթքը։ Եթէ նա մեռնի պատերազմի դաշտում, խոկոյն կըջնջուեն նրա մեղքերը և նա արքայութիւն կըտարուի՝ սևաչեայ հուրիների գրկում երանելի երջանկութիւն վայելելու համար»...



Այդպիսի խոստումներ պարունակող կրօնը առանձնապէս սիրելի էր արաբների համար, որովհետև յարմար էր սրանց բարքին, ձեռնտու էր աւազակային հակումներին։ Ուրեմն բոլորովին զարմանալի չէ, որ անապատի հուշկահար զաւակները, սուրը քարոզող կրօնի հրաւէրը լսելուն պէս՝ գունդագունդ հաւաքուեցին մարգարէի դրօշակի տակ։ Այդպիսով կազմուեց մի ահեղ զօրութիւն, որ կարճ ժամանակում նուաճեց ընդարձակ երկիրներ։

Ճիհադը — սրբազան պատերազմը իւրաքանչիւր մահմեդականի պարտականութիւնն է։ Նրանից հրաժարուելու իրաւունք ունեն միայն կաղերն ու կոյրերը։ Մահմեդականների կարծիքով ամբողջ աշխարհը բաղկացած է երկու մասից՝ «Դարու-լ-իսլամ», այսինքն «իսլամի երկիր» և «դարու-լ-հարբ», այսինքն «պատերազմների երկիր», որտեղ ապրում են այլակրօնները, որոնց ուղիղ ճանապարհի վրայ կանգնեցնելու համար անհրաժեշտ է անդադար պատերազմ մղել։ Եւ Մահմեդի զաւակները բաւական եռանդով կատարեցին այդ միսսիան։ Նրա մահից յետոյ իսլամը ամենամեծ չափով տարածուեց գլխաւորապէս առաջին չորս խալիֆների, այն է Աբուբէքրի (632 – 634), Օմարի (634—

644), Օսմանի (644—656) և Ալիի (656—661) ժամանակ։ Միայն Աբուբեքրի խալիֆայութեան ընթացքում մահմեդականները աւերեցին չորս հազարից աւելի եկեղեցիներ և շինեցին մօտ հազար չորս հարիւր մզկիթ *)։

Ալլահը թողել է բացարձակապէս իսլամի կամքին յաղթուած «էհլի իլ քիթաբի» վիճակը։ Նա ղուրանով իրաւունք ունի սեփականել նրա բոլոր շարժական և անշարժ կարողութիւնը և նրա մատաղահաս զաւակներից օգտուել իր մարմնական վայելչութեան համար, որքան կամենայ։ Դարերի ընթացքում մղած պատերազմները զարգացրին մահմեդականների անզթութիւնը, կոպտացրին զգացմունքը և աճեցրին գազանային բնազդը, այնպէս որ այժմ ղրեթէ իւրաքանչիւր միւսլէմ մի սուրբ գործ է համարում անհաւատներին սպանելը, նրանց կանանց ու աղջիկներին բռնաբարելը, անմեղ երեխաներին մորթատելը և լիուր տեղն ամբողջ գիւղ ու քաղաքներ ոչնչացնելը։ Մահմեդականների համար «իմաստունների թագաւոր» համարուող Աբդուլ Հիւսէյն Մահմեդ բէն Մուհամմեդ բէն Համիդը, որ աւելի յայտնի է «Ղուրդուրի» մականունով, կրօնական պատերազմի մասին հետևեալն է գրում իր «Վրդայիա» կոչուող գրքում—«Քրթապուլ ճրհադ» վերնագրի տակ. — ...Եթէ յարձակուողները անհաւատներն են, այն ժամանակ ճրհադը էական պարտականութիւն (ֆարզը այն) է իւրաքանչիւր միւսլէմի համար։ Այդպիսի դէպքում պատերազմելու պէտք է գնան նոյն իսկ կանայք և ստրուկները... Եթէ յարձակուողներն իրանք միւսլէմներն են, այն ժամանակ ճրհադը երկրորդական պարտականութիւն է (ֆարզը կիֆայէ)։ Երբ մերայինները մի տեղ պաշարեն, հարկաւոր է պաշարուածներին (քրիստոնեաներին և հրէաներին) առաջարկել մահմեդականութիւն ընդունել, եթէ չըհամաձայնեն՝ պէտք է ճիղեայ—հարկ պահանջել, իսկ եթէ այդ էլ մերժեցին, այն ժամանակ պէտք է բոլորին կոտորել. այրել նրանց ծառերը, ոչնչացնել արտերը...

Այդ բոլորը վերաբերում է օտարահպատակ այլակրօններին. իսլամական երկրներում ապրողների մասին էլ խալիֆ Օմարն հրատարակեց հետևեալ օրէնքները.

I. Մահմեդականների հողի վրայ չըշինել ոչ եկեղեցի, ոչ սինագոգա։

*) Տես՝ История умственнаго развитія Европы—Дрепера". եր. 273.

2. Շրվերանորոգել քանդուածները։

3. Չարգելել մահմեդական ճանապարհորդներին նրանց մէջ իջևանել իբրև հիւրանոցներում։

4. Մահմեդականին իր տանը հիւր ընդունել երեք օրով։

5. Հետամուտ չլինել մահմեդականներին և նրանց գործերի մասին ոչինչ չհաղորդել անհաւատներին։

6. Եթէ մերձաւորներից մէկն ուզենայ իսլամն ընդունել, չարգելել։

7. Միւսուլմաններին յարգել։

8. Մահմեդականներին զիջանել իրանց տեղը, որովհետև մահմեդականներն են բոլոր տեղերի տէրը։

9. Չընհագնել, չզարդարել մահմեդականների նման։

10. Մահմեդականի անուն չկրել։

11. Թամբած և սանձած ձի չընհեծնել։

12. Ո՛չ նետ, ո՛չ անեղ, ո՛չ սուր, ո՛չ հրացան և ոչ մի զէնք չկրել։

13. Կնիքաւոր ակ ունեցող մատանիներ զործ չածել։

14. Գինի չվաճառել և չխմել հրապարակով։



15. Կռապաշտական շորեր չընհագնել։

16. Կռապաշտների վարք ու բարքին նման բաներ չանել։

17. Մահմեդականներին մօտ տուն կամ մի այլ շինութիւն չընդնել։

18. Մեռելներին մահմեդականների զերեզմանոցին մօտիկ չթաղել։

19. Մերձաւորի մեռնելիս կամ մի ուրիշ դժբախտութիւն պատահելիս բարձրաձայն լաց չընելիս։

20. Մահմեդական ստրուկներ չընդնել։

Դրանից յետոյ խալիֆն աւելացնում է, որ եթէ օտարադաւանները չիրագործեն յիշեալ պատուէրները, այն ժամանակ իւրաքանչիւր մահմեդական իրաւունք ունի առանց մի որ և է պատասխանատուութեան նրանց սպանել։

Ընհագը և ընդհանրապէս վերոգրեալ բոլոր պատուէրները իսլամի առաջ բաց արին սրածութեան և աւերածութեան մի լայն ասպարէզ։ Ամեն տեղ, ուր մուտք է գործել նա, հետք մնացել է միայն տանջանք և հեծեծանք, հուր և սուր։ Մեր ասածներն ապացուցանելու համար բաւական է իբրև նմուշ իսլամական երկիրներից վերցնել Թիւրքիան, ուր բաղմած է իսլամի խալիֆը։ Այդ ընդարձակ պետութեան



Իսլամի Խալիֆ—սուլթան Համիդ

մէջ ոչ մի անկիւն չըկայ, որ անմեղ զոհերի արիւնով շաղախուած, մահմեդականների դաղանութիւններին ենթարկուած չըլինի։ Թիւրքաց սուլթանները, հականալով այն մեծ նշանակու-



թիւնը, որ ունի իսլամի խալիֆը, ամեն կերպ աշխատեցին ձեռք բերել այդ կոչումը—իշխանութիւնը և վերջապէս հասան իրանց նպատակին։ Այժմ ամբողջ մահմեդական աշխարհը, բացի շիաներից, de jure թիւրքաց սուլթանին խալիֆ է համարում *)։ Սուլթանը իր նշանակութիւնն ու ազդեցութիւնը ուժեղ պահելու համար արքունիքում խիստ հսկողութեամբ պահպանում է մահմեդականների ամենամեծ սրբութիւնները՝ այծի բրդից գործած «Սանջակի Ղերիֆը» **) (նիւրական դրօշակը), որով Մահմեդն առաջին անգամ ամբոխին առաջնորդեց դէպի Մեկկա. Օմարի յաղթական դրօշակը, «Խըրխայի Ղերիֆը»—այսինքն Մահմեդի վերարկուն, Քեաբէի արծաթէ բանալին, Մահմեդի մօրուսի մազերը, նալընները և այլն։ Բացի դրանից սուլթաններն աշխատել են նաև արտաքին դրաւչութիւն տալ իրանց ընակավայրին—Կ. Պոլսին, ահագին դումարներ ծախսելով նորանոր մզկիթներ շինելու, հները շքեղացնելու վրայ։

---

*) Տես Каземъ Бекъ: «О значеніи Имама„,

**) Եթէ Սանջակի Ղերիֆը դուրս հանեն, այն ժամանակ ամբողջ աշխարհի մահմեդականները պարտաւոր են մնանալ անհաւատների դէմ կրօնական պատերազմ մղելու համար։



Այա Սոֆիա

Այդտեղ մզկիթների թիւը ութ հարիւրից աւելի է, բայց իր հոյակապութեամբ առաջին տեղն է բռնում Այա-Սոֆիայի հռչակաւոր մզկիթը, որ կարող է զետեղել քսաներեք հազար մարդ։ Ընդայելով այդ միջոցներին, սուլթանները չունին այն ազդեցութիւնն ու իրաւունքները, որոնցով օգտւում էին նախկին խալիֆները։ Սուլթանը կրօնական ոչ մի վճիռ չի



կարող տալ։ Նոյն իսկ Թիւրքիայում նրա իրաւունքները սահմանափակ են. այդտեղ կրօնական բոլոր գործերը կառավարում է Շէյխ ուլ Իսլամը, որ իր ստորադրեալ ուլեմների, մուֆթիների (վիճակային վերահսկիչ), իմամների (մզկիթի կառավարիչ), դաղիների (վիճակային դատաւոր) և այլ պաշտօնեաների միջոցաւ հարկաւոր դէպքում կարող է մահմեդականներին դրդռել սուլթանի դէմ։

Իսլամի ոյժը հետզհետէ թուլացել է և այժմ կրօնական պատերազմը այնքան սարսափելի չէ, ինչպէս Սուլէյման մեծի ժամանակներում։ Թիւրքիայի անցեալն արդէն հաստատել է աւետարանի այն խօսքերը, թէ «սուր հանողը սրով կ'ընկնի»։ Այդ պետութիւնը օրէցօր ընկճւում, քայքայւում է։ Նրա հողերի մի մասը՝ Անգլիայի, մի մասը Աւստրիայի, մի մասը Ռուսիայի ձեռքն է անցել, մի մասն էլ բրռնութեան տակից ազատելով՝ կազմել է Ռումինիա, Բուլղարիա, Սերբիա, Չերնագորիա և Յունաստան փոքրիկ պետութիւնները։

Այժմ սուլթանի կեղեքւած, ստրկացած հպատակների մնացորդը զլուխ է բարձրացրել և կեանքի ու ոյժի ապահովութիւն է պահանջում։ Եւրոպան աշխատում է խաղաղ ճանապար-

հով, բարենորոգումներով լուծել այդ հարցը...

Բայց միթէ կարելի է հաւատալ այն պետութեան բարենորոգումներին, որի աւանդական դաւանանքն է՝ «կոտորել անհաւատներին, որովհետեւ սուրը երկնքի բանալին է»... Միթէ կարելի է խաղաղութիւն, արդարութիւն և դթութիւն սպասել այն տարրից, որի ամենամեծ կրօնական պարտականութիւնն է «ճիհադը» – սրբազան պատերազմը:

## V

## Իսլամի աղանդաւորները

— Աղանդները դրեթէ մի անխուսափելի երեւոյթ են կազմում ամեն մի կրօնի մէջ — ասում է Տրաչևսկին, սակայն ոչ մի կրօն այնքան հարուստ չէ աղանդաւորներով, ինչպէս քրիստոնէութիւնը և իսլամը: Իսլամի ամենաառաջին աղանդաւորները համարւում են շիաները, որոնք առաջ եկան՝ զլիսաւորապէս քաղաքական տարաձայնութիւնների պատճառով: Ահա թէ ինչպէս:

Մահամեդ ժամում Մահմեդին հարցրին թէ ով պիտի լինի նրա յաջորդը... Մահմեդը պատասխանեց – ամենազօրեղը:

Այդ բառի մեկնութեան պատճառով տեղի



ունեցաւ վէճ. ժողովուրդը բաժանուեց երկու կուսակցութեան: Մէկը պնդում էր, թէ ամենազօրեղը Ալին է — Մահմեդի փեսան, իսկ միւս կուսակցութիւնը ամենազօրեղ համարում էր Աբուբէքրին (Մահմեդի աներ), որը և խալիֆ դարձաւ: Աբուբէքրին յաջորդեցին Օմարը և Օսմանը... Մեդինայում խառնակութիւն պատահած ժամանակ Օսմանը սպանուեց և խալիֆ դարձաւ Ալին (656 – 661): Սակայն հարցը միայն դրանով չվերջացաւ. այդ միևնոյն ժամանակ իրան խալիֆ հրատարակեց և Օսմանի եղբօր-որդին — Մոաւին, որը Սիւրիայի կառավարիչն էր... Նրա ուղարկած մարդիկը սպանեցին Ալիին՝ Կուֆա քաղաքի մզկիթում — 661 թ.: Ալիին յաջորդեց նրա մեծ որդին՝ Հասանը, բայց դա էլ Մոաւի զօրքերից յաղթուելով, շուտով հրաժարուեց իշխանութիւնից: Նրան թունաւորեցին 669 թուականին: Կուֆայի ընակիչները խալիֆ ընտրեցին Ալիի կրտսեր որդուն — Հիւսէյնին: Հիւսէյնը շտապեց այդ քաղաքը, սակայն Մոաւի խալիֆի որդին Եզիդը բազմաթիւ զօրքով կտրեց ճանապարհը և սպանեց նրան (680 թ. հոկտ. 10-ին): Սպանութեան տեղը — Քէրբալա քաղաքը՝ ապագայում մեծ ուխտատեղի դարձաւ շիաների հա-

մար *)։ Ահա այդ տարաձայնութիւնները, այդ երկարատև արիւնհեղութիւնը պատճառ դարձաւ մի մեծ աղանդի առաջ գալուն։ Ալիի կողմնակիցները շիաներ կոչուեցան, որ նշանակում է հերձուածողներ, իսկ միւսները սիւնիներ կոչուեցան, որ նշանակում է ուղղափառներ։ Շիաներն առաջին երեք խալիֆներին՝ —Աբուբէքրին, Օմարին, Օսմանին յափշտակիչներ և կեղծ խալիֆներ են համարում, որովհետև դրանք յաջորդաբար Ալիի ձեռքից խլեցին իշխանութիւնը։ Սիւննիներն ընդհակառակը, ինքնակոչ խալիֆներ են համարում Ալիի ժառանգներին։ Տասներկու իմամներից յետոյ շիաների իմամութիւնն խզուած վերացաւ և այժմ նրանք կառավարուում են մուշտէյիդներով։

Սիւննիները Ղուրանի չափ սուրբ են համարում և «Սիւնեան», այսինքն Աբուբէքրի և Օսմանի ձեռքով խմբագրած—(Մահմեդի սիրելի կնոջ՝ Այիշէի թելադրութեամբ) գիրքը, որ իր մէջ պարունակում է զանազան կրօնական աւանդութիւններ և պատմուածքներ։ Շիաները «Սիւննան» մի հեքիաթազիրք են անուանում և չեն ընդունում նրա սրբութիւնը։ Ժամանակի ընթացքում մահմեդականների մէջ առաջ եկան այլև այլ կուսակցութիւններ, նորանոր աղանդներ։ Դրանց գլխաւոր բուն՝ Պարսկաստանը և Արաբիան է։ Իսլամի միւս աղանդաւորներն են.

Խարիջիտներ, Կարմատներ, Ֆաթիմիդներ, Վահաբիտներ, Մուտաղիլիտներ, Բաբիներ, Ալիալլահիներ, Քեարիմխանականներ, Եզիդիներ և այլն։

Խարիջիտներ. Դրանք իսլամի ամենահին աղանդաւորներն են, որ պահանջում են իրանց երկրի համար ռամկավարական հասարակապետութիւն, կատարեալ ազատութիւն, եղբայրութիւն և հաւասարութիւն։ Դրանք ասում են.

—Մի հարցնէք, թէ մենք ինչ ցեղից և ինչ հասարակութիւնից ենք, որովհետև բոլոր մահմեդականները եղբայրներ են և նրանց մէջ խտրութիւն չկայ»...

Սկզբում Իսլամի խալիֆները մեծ հալածանք սկսեցին և խմբերով կոտորեցին իդեալիստ խարիջիտներին. սակայն Ասիայում հալածուած, ճնշուած աղանդը տարածուեց Աֆրիկայում

*) Իւրաքանչիւր տարի շիաները մեծ ջերմեռանդութեամբ կատարում են Ալիի ժառանգների՝ Հասանի և Հիւսէյնի նահատակութեան տօնը, որ յայտնի է «շախսեի-վախսեի» անունով։

և նոյնիսկ Սպանիայում։ Այժմ նա գոյութիւն ունի Աֆրիկայի աղատասէր բերբերների մէջ՝ գլխաւորապէս Ալժիրում։ Այդ միևնոյն աղանդին է պատկանում Արաբիայի ծովեզերեայ Մասկատ քաղաքի իմամը։

Կարմատներ. Այդ աղանդի հիմնադիրն է եղել Կարմատ անունով մի գիւղացի։ Նոր աղանդը քարոզում էր կատարեալ կոմունա... Նրա իւրաքանչիւր անդամի կայքը, գոյքը, նոյնիսկ կինը ընդհանուրի սեպհականութիւն էր համարւում և ամեն մէկն իրաւունք ունէր նրանցից օգտուելու։ Կարմատներն Իրանից տարածուեցին Սիրիայում և Արաբիայում։ Նրանց մէջ նաև բազմաթիւ քրիստոնեաներ և հրէաներ կային։

Դժբախտաբար այդ աղանդի ամենագլխաւոր դաւանանքը—մարդասպանութիւնը և թալանն էր (ի հարկէ միայն օտարադաւանների։) Դրանք մի անգամ գողացան նոյնիսկ Քեաբէի Սեւ քարը, որը վերադարձրին միայն մեծ փրկանք ստանալուց յետոյ։ Ժամանակի ընթացքում կարմատները կատարեալ աւազակներ դարձան և միայն մի քանի տասնեակ տարիներ կարողացան գոյութիւն ունենալ։ Խաչակրաց արշաւանքների ժամանակ դրանք սարսափ էին տարածել բոլոր քրիստոնեաների վրայ և յայտնի էին Ասասինեներ անունով։



Ֆաթիմիդներ. այդ աղանդի հայրենիքը Եգիպտոսն է։ Մուսլէմների կրօնական երկպառակութիւնների ժամանակ այդտեղ եկաւ մի ինքնակոչ մարդ՝ Իբադուլլահ անունով և յայտնեց, որ ինքը Մահմեդի սիրելի աղջկայ՝ Ֆաթիմայի ժառանգներից է, ուստի և իրաւունք ունի «իմամ» լինելու. պատերազմասէր ասասինները շատերը պաշտպանեցին դրան և իմամ հրատարակեցին։ Այդ իմամի կողմնակիցները «Ֆաթիմիդներ» կոչեցան և երկար տարիներ հզօր վիճակ ունեցան, մինչև որ 1171 թ. Սալադին անունով քիւրդը եկաւ նուաճեց նրանց և վերջ դրեց այդ աղանդին։

Վահաբիներ. XVIII դարի երկրորդ կիսում Մահմեդ-իբն-Աբդուլ Վահաբ անունով մի արաբացի Եմէն քաղաքում փորձեց վերականգնեցնել Իսլամի նախկին մաքրութիւնը և պարզութիւնը... Նա համարձակ կերպով քարոզեց իր մտքերը և շուտով բազմաթիւ հետևողներ գտաւ, որոնք «վահաբիներ» կոչեցան։ Այդպիսով Վահաբը մահմեդականների Լիւտերը եղաւ և մի նոր աղանդի հիմնադիր դարձաւ։ Վահաբիներն ընդունում են Ղուրանը իբրև մի խելացի գիրք,

որ պատկերացնում է Իսլամի երջանիկ ժամանակները։ Նրանք ատում են Ղուրանի զանազան յաւելուածները, ծիսակատարութիւնը և այլն, և աչքի են ընկնում իրանց պարզ ու հասարակ կենցաղավարութեամբ։ Նրանք կրօնական ոչ մի ծէս չունին։ 1803 թ. նոյնիսկ փորձեցին ոչնչացնել Քեաբէի Սև քարը։ Մինչև այժմ էլ այդ աղանդը գոյութիւն ունի արևելեան Արաբիայում։

Բաբիներ *). 1835—1849 թուականներին Իսլամը մեծ հարուած ստացաւ Զիրազում ծնուած ու մեծացած Ալի Մահմեդ անունով մի ճգնաւորի քարոզներից... Ալի Մահմեդը իրան Բաբ անուանեց, որ նշանակում է «ճշմարտութեան դուռ» և իր զեղեցիկ քարոզներով կարճ ժամանակում բազմաթիւ հետևողներ գրաւեց...

Բաբը մերժում էր ծիսակատարութիւնը, չէր գնում մզկիթ. խմում էր գինի, ուտում էր խոզի միս (որոնք արգելուած են), մերժում էր նաև շարիաթը և պահանջում կատարեալ հաւասարութիւն և ազատութիւն։ Նա կանանց երեսից վար առաւ չադրան և քարոզեց կանանց ու տղամարդկանց իրաւունքների հաւասարութիւն... Այդ քարոզները ահագին խռլրտում առաջ բերին Պարսկաստանում։ Վերջապէս Բաբին բանտարկեցին և Նասր-Էդդին շահի հրամանով 1849 թ. գնդակահար արին։ Բայց դրանով Բաբի հետևողներն աւելի գրգռուեցին և ապստամբութիւն առաջ բերին Պարսկաստանի զանազան մասերում, իսկ 1852 թ. Թէհրանում փորձեցին սպանել շահին. փորձը անյաջող անցաւ և շատ մարդիկ պատժուեցին, սակայն բաբիները չլքուսահատուեցին և ոխը սրտերից չլքանեցին։ Վերջապէս 1896 թ. նրանք սպանեցին Նասր-Էդդին շահին և դրանով յայտուրդ տուին իրանց վրիժառութեան զգացմունքին։

Բաբի մահից յետոյ նրա ցանած սերմերը տուին պտուղներ և բաբիութիւնը հսկայական քայլերով առաջադիմեց։ Կարճ ժամանակում նա տարածուեց Պարսկաստանում, Կովկասում, Անդրկասպեան երկրում, Հնդկաստանում և Սիրիայում։ Բաբը նշանակել էր 18 առաքեալներ, որոնք իր մահուանից յետոյ պիտի տարածէին բաբիութիւնը։ Դրանցից նշանաւոր դարձան երեքը՝ այն է խորասանցի մոլլա Հիւսէյինը, բալաֆրուշցի մոլլա Մահմեդ Ալին և զաղզինցի մի գեղեցկուհի կին՝ Կուրետ-էլ-Այն անունով։

*) Տես Казембъ Бекъ: «Бабъ и бабисты».

Այժմ բաբիլթիւնը ամենատարածուած աղանդն է և հետևողները ունի ամեն դասակարգի մարդկանցից։ Նրա գլխաւոր բոյնը՝ Խորասանը և Բաղդադի շրջակայքն է։—Բաբի փոխանորդը նստում է Հրէաստանի Աքքեայ քաղաքում և այդտեղից հրամայում բոլոր բաբիներին։ Բաբիութեան գլխաւոր դաւանանքը հետևեալը ն է.

—Ջրհեղեղից առաջ մարդիկ անմիջական յարաբերութիւն ունէին Աստծոյ հետ, բայց յետոյ այդ յարաբերութիւնը կտրուեց և մարդիկ հետզհետէ մոռացան ճշմարիտ կրօնը։ Մոլորեալներին ճշմարիտ ճանապարհի վրայ կանգնեցնելու համար Աստուած զանազան մարգարէներ ուղարկեց, որոնցից նշանաւորներն են՝ Մովսէս, Կոնֆուցիոս, Բուդդա, Զրադաշտ, Քրիստոս, Մահմեդ և վերջապէս Բաբ։ Այդ մարգարէներից իւրաքանչիւրը մի նոր կրօնի հիմնադիր դարձաւ, բայց դրանցից ամենավերջինը, ուրեմն և ամենաճշմարիտը Բաբիութիւնն է...

Իւրաքանչիւր կրօն ժամանակի ընթացքում հնանում, սկզբնական ճշմարտութիւնից հեռանում է, ուստի Աստուած շարունակաբար ուղարկելու է նորանոր մարգարէներ։ Գուցէ



մի ժամանակ բաբիութիւնն էլ վերջանայ և նրա տեղ մի նոր կրօն բռնէ...

Բաբիները կողմնակից են միակնութեան, ատում են մարդասպանութիւնը և չեն ընդունում ոչ պատկերներ, ոչ ճոխ ծիսակատարութիւն և ոչ էլ տաճարներ... Նրանց աղօթատները հասարակ ժողովատեղիներ են և ջունին ոչ մի զարդ ու զարդարանք, բացի առաստաղից կախած լապտերից։

Մուսազիլիտներ. Այդ աղանդն առաջ եկաւ Բասրայում մահմեդականութեան II դարում, երբ Ալասիլ իբն Ատան կրօնական վէճերի պատճառով բաժանուեց իր ուսուցչից՝ Հասան Բասրիից։ Նրա հետևողները մուտազիլիտներ կոչուեցան, որ նշանակում է բաժանուածներ։ Դրանք Իսլամի ազատամիտ դաւակներն էին, որ չէին հաւատում ճակատագրին և այն բանին, թէ Ղուրանը Աստուածային ներշնչմամբ է գրուած։ Դրանք քարոզում էին խղճի և կամքի կատարեալ ազատութիւն։

Ալիալլահիներ. Այդ աղանդի ծագման մասին ոչ մի ճիշտ տեղեկութիւն չկայ... Իրանք աղանդաւորներն ասում են, որ իրանց աղանդն առաջ է եկել VII դարում, այսինքն

խալիֆ Ալիի ժամանակ։ Այդ աղանդի ամբողջ դաւանանքն է՝—Ալին Ալլահ է...

Եւ խակապէս ալիալլահիները Ալին բարձրացնում են մինչև Աստուածութեան աստիճանը։ Նրանցից շատերի ասելով Ալին նոյն ինքը Աստուած էր, որ զանազան ժամանակներում և զանազան նպատակների համար տեսանելի մարմին ստացաւ և աշխարհ եկաւ՝ Մովսէս, Դաւիթ, Յիսուս, Մահմեդ և այլ մարգարէների անունով։

Ալիալլահիները ամենամեծ չափով ընդունում են հռդեփոխութեան վարդապետութիւնը, այսինքին հաւատում են, որ հոգին կարող է անցնել մարդուց—բոյսերի, կենդանիների, ջրի և այլ բաների մէջ... Դրանք սկզբունքով համակրում են քրիստոնեաներին, առ հասարակ շատ մեղմ են վարւում բոլոր այլակրօնների հետ, ունին ժառանգական մոլլաներ, յատուկ շէյխեր և դերուիշական միաբանութիւններ։

Ալիալլահիները ապրում են Թիւրքիայի արևելեան և հարաւ-արևելեան մասում, Պարսկաստանում և հարաւային Կովկասում։ Նրանք բաժանուած են բազմաթիւ ցեղերի, որոնցից նշանաւորն են Հաջի-Բէգթաշի, Դաւուդի Ալթաշբէգի, Եզդիշէր և այլն։



Քեարիմխանական. դա բոլորովին նոր աղանդ է, առաջ է եկել ուղղափառական թուականներին և տարածուած է գլխաւորապէս պարսիկների բարձր շրջանում։ Այդ աղանդի հիմնադիրն է Քեարիմ խան անունով մի պարսիկ, որը կարճ ժամանակում ուսումնականի հռչակ ստացաւ և լաւ ընդունելութիւն գտաւ Թէհրանում բարձրաստիճան անձերի մօտ։ Նա հրատարակել է «Գիրք Քեարիմ խանի» վերնագրով մի կրօնագիրք, որ իր մէջ ամփոփում է նոր աղանդի ամբողջ դաւանանքը և բաղկացած է տասն գլուխներից...

Առաջին գլխում Քեարիմ խանը ի միջի այլոց ասում է—ես թափանցեցի բնութեան գաղտնիքները և եկայ այն եզրակացութեան, որ Ղուրանը մի հեքիաթագիրք է...

Երկրորդ գլխում հաստատում է Աստուծոյ գոյութիւնը և միութիւնը։

Երրորդում ապացուցանում է, որ Մահմեդը հասարակ մահկանացու էր և ոչ թէ մարգարէ և այլն։ Ընդհանրապէս բոլոր քեարիմխանականները չեն ընդունում ոչ հոգու գոյութիւնը և ոչ էլ հանդերձեալ կեանքը։ Նրանք հաւատում են, որ աշխարհի ամենարդար և մեծ մարգարէն Իսան (Յիսուսը) էր...

Եզրդիներ. շատերն եզրդիներին կրակապաշտներին հետևողներ են համարում և ասում են, որ եզրդի բառը առաջ է եկել Որմիզդ բառից... Շատերն այդ անունը կապում են «Իզեդ» (չար ոգի) բառի հետ, իսկ իրանք աղանդաւորները պնդում են, որ եզրդի բառը առաջ է եկել հին պարսկական «Եզդ» (Ezd) բառից, որ նշանակում է Աստուած. ուրեմն «եզրդի» նշանակում է աստուածային, այսինքն Աստծուն ճանաչող... Շիաներն էլ ասում են, որ եզրդիներն առաջ են եկել չարագործ Եզիդ խալիֆի կողմնակիցներից: Իսկապէս դժուար է ասել, թէ այդ կարծիքներից որն է աւելի ստոյգը. հաւանական է այն, որ եզրդիները սկզբում մահմեդականներ են եղել... Այդ աղանդի հիմնադիրն եղաւ Շէյխ Ադին, որ ապրում էր XII դարում... Դրա գերեզմանը գտնւում է Ամադիայում (Մոսուլի մօտ), որտեղ իւրաքանչիւր տարի, օգոստոսի 10-ին հաւաքւում են բազմաթիւ եզրդիներ, որոնք սպիտակ հագուստով, գլուխները սև փաթաթած, ձեռքերում վառած կանթեղներ բռնած՝ տարօրինակ ձևով պարում են գերեզմանի շուրջը — ամբողջ գիշերը...

Եզրդիները հաւատում են միայն Ալլահին



և ասում են, որ 124,000 մարգարէներ են եղել, որոնցից գլխաւորներն են Մովսէս, Յիսուս և Մահմեդ... Նրանց գլխաւոր դաւանանքն այն է, թէ պէտք է հաւատալ Աստծոյ գթասրտութեանը և ամենակարողութեանը, բայց միևնոյն ժամանակ հարկաւոր է ձեռք բերել և սատանայի բարեհաճութիւնը, որովհետև սատանան վաղուց արդէն քաւել է իր մեղքերը և նրա միջնորդութիւնն ու հովանաւորութիւնը մեծ արժէք ունի ամեն մի մահկանացուի համար: Ահա այդ պատճառով շատերը նրանց սատանայապաշտ են համարում: Եզրդիներն ապրում են գլխաւորապէս Թիւրքայում (90,000) և մասամբ Պարսկաստանում ու Ռուսաստանում (10,000): Թիւրքիայում նրանք ենթարկւած են գրեթէ նոյն հալածանքներին, որոնց ծանր լծի տակ հեծում են քրիստոնեաները:

## VI

## Իսլամ եւ գիտութիւն

Իսլամի վարդապետութիւնը բոլոր մարդկանց բաժանում է չորս դասակարգի. ա) միւսլէմներ, որոնք իրաւունք ունին վայելելու ամեն տեսակ արտօնութիւններ. բ) զըմմիներ

կամ բայաներ, որոնք են իսլամական պետութիւնների օտարադաւան հպատակները. գ) Հարբիաներ, որոնք են իսլամական երկիրներից դուրս ապրող օտարադաւանները և դ) մուստամիններ — օտարահպատակ քրիստոնեաներ, որոնք Իսլամի երկրում ապրում են «ամանի», այսինքն խոստացած ապահովութեան հիման վրայ։ Ղուրանի պատուէրներին նայելով, մահմեդականները պէտք է «Հարբիաների» դէմ անդադար պատերազմ մղէին և հետևապէս բոլոր պետութիւնների անհաշտ թշնամի դառնային։ Սակայն դա անիրագործելի մնաց։ Եւ իսկապէս մի՞թէ կարող է մի որ և է պետութիւն, ազգ կամ համայնք գոյութիւն ունենալ կղզիացած, առանց դրացիական յարաբերութիւնների. մի՞թէ մարդ կարող է իր տնտեսական-սոցիալական պահանջներին յագուրդ տալ, երբ ստիպված է առընչութիւն չունենալ իրան շրջապատողների հետ։ Ի հարկէ ոչ։

Որքան բարձր է մի որ և է ժողովրդի կուլտուրական կեանքը, այնքան էլ մեծ է օտարների հետ շփուելու, յարաբերութիւն ունենալու պահանջը։ Դեռ Մահմեդից առաջ արաբները հասել էին քաղաքակրթութեան



այն աստիճանին, որ մասնակցում էին համաշխարհային վաճառականութեանը և այդ ասպարիզում նոյն իսկ աչքի ընկնող դեր էին կատարում։ Իսլամը յեղափոխելով նրանց թէ սոցիալական և թէ բարոյական կեանքը, ստեղծեց նորանոր պահանջներ, պէս պէս ձգտումներ, որոնց բաւարարութիւն տալու համար անհրաժեշտ էր եռանդուն գործունէութիւն, մտաւոր շփում։ Կրօնական պատերազմների շնորհիւ ձեռք բերած հարստութիւններն աւելի ու աւելի բարդացրին մահմեդականների տնտեսական կեանքը, մեծացրին կապիտալը, որ աւելի լայն գործադրութիւն էր պահանջում։ Ահա այդ ամենը դարձաւ մի ուժեղ հարուած, որ առաջ մղեց արաբների վաճառականութիւնը, զարգացրեց արուեստները, գիտութիւնը, որոնցով նրանք մի ժամանակ առաջնակարգ տեղ գրաւեցին։

Արաբական խալիֆայութիւնը մի կողմից արիւնալի պատերազմներով ընդարձակում էր իր սահմանները, իսկ միւս կողմից զուգահեռաբար զարգացնում կուլտուրական կեանքը։ Կարճ միջոցում արաբները տէր դարձան Եգիպտոսի, Սիրիայի, Փոքր Ասիայի և այլ երկիրների։ Քրիստոնեաները զգացին նորածնունդ

կրօնի հետևողների զինուորական և կուլտուրական ոյժը։ Աշխարհի այս և այն կողմերից մարդիկ դիմում էին մահմեդականների հզօրութեան ու փարթամութեան կենդրոնները՝ Դամասկոս, Բաղդադ, Գահիրէ և Ալէքսանդրիա...

Այո, այդ ժամանակաշրջանում արաբական քաղաքակրթութիւնը հասաւ իր զարգացման դագաթնակէտին, բայց դրա պատճառը, գլխաւոր գործօնը ոչ թէ Իսլամն էր, այլ արաբների բնատուր ընդունակութիւնը, հակումները և սոցիալական ուրիշ հանգամանքներ։ Ինչպէս նկատեցինք վերևում, Իսլամը միայն սկզբներում միայն նպաստեց այդ բարգաւաճմանը, յեղափոխելով Արաբիայի կեանքը, լարելով արաբների մտաւոր ոյժը։ Սակայն դրա փոխարէն էլ նա իր Ղուրանի, մոլեռանդ հոգևորականութեան շնորհիւ հետզհետէ պատնէշ բարձրացրեց այդ նախանձելի առաջադիմութեան հանդէպ և իր հետևողներին յետամնացութեամբ շղթայելով, առաջացրեց այն ողբմելի կացութիւնը, որի մէջ այժմ գտնւում է մահմեդական տարրը։

Հարեմ, ստրկութիւն, պատերազմ և ատելութիւն դէպի ուսումն ու գիտութիւնը — ահա այն գլխաւոր բառերը, որոնք պատճառ են ե-



ղել մահմեդականների յետամնացութեան... Հարեմի շնորհիւ կանայք և աղամարդիկ բոլորովին անջատուած են միմեանցից և ոչ մի բարոյական կապ չունին իրար հետ։ Այդ երկու սեռերից իւրաքանչիւրն ունի իր առանձին հայեացքները, շահերը, ինտրիգները։ Այդ հանգամանքը վնասում է նախ կանանց, որոնք զուրկ են ամենատարրական մտաւոր աշխատանքից և երկրորդ՝ տղամարդկանց, որոնք մեծ մասամբ իրանց ուշքն ու միտքը զբաղեցնում են հարեմական գործերով։ Այդ պայմաններում ի հարկէ խօսք անգամ չի կարող լինել մատաղ սերնդի կրթութեան մասին։

Հարեմի կինը իրան շրջապատում է հարճերով և բնականաբար վարժւում ծուլութեան, շայտ կենցաղավարութեան։

Իսլամը տակաւին ոչ մի փոփոխութեան չէ ենթարկել իր չոր ու ցամաք մտքերը, ծէսերը, չէ ընդունել ոչ մի թարմ գաղափար։ Նրա գաւակների բարոյականութիւնը, մտաւոր հորիզոնը գտնւում է այն աստիճանում, երբ մարդիկ նոր հեռանում են կռապաշտութիւնից և սկսում քաղաքակրթել։ Նա պաշտպան է այն հիմնարկութիւններին, բարք ու վարքերին, որոնք կարող են միայն խոչընդոտ լինել առաջադիմու-

թեան։ Իբրև նմուշ մահմեդականների անտարբերութեան դէպի շրջապատող բնութիւնը և ատելութեան դէպի գիտութիւնը, առաջ ենք բերում Մոսուլ քաղաքի, «իմաստնագոյն քաղաքի» բնորոշ նամակը, որով նա հրաժարւում է կատարել յայտնի ճանապարհորդ Էյլեարդի խնդիրը—հաղորդել մի քանի տեղեկութիւններ Մոսուլի մասին. ահա այդ նամակը.

—Ի՛մ մեծաշուք բարեկամ. գրում է քաղին. այն, ինչի մասին դու հարցնում ես, անօգուտ է և վնասակար։ Թէև մանուկ հասակից ապրել եմ այս քաղաքում, բայց երբէք մտքովս չէ անցել՝ հաշուել տները, իմանալ բնակիչների թիւը։ Ի՞մ ինչ գործս է, թէ ով քանի ջորի ունի, ով ինչքան ապրանք է բեռնաւորում նաւի վրայ։ Քաղաքի հին պատմութիւնն էլ միայն Ալլահը գիտէ։ Մեզ վտանգաւոր է այդ իմանալը։ Ի՛մ բարեկամ, իմ ոչխարիկ! մի աշխատիր իմանալ այն, ինչ որ քո գործը չէ։ Դու եկար մեզ մօտ, քեզ ուրախութեամբ ընդունեցինք։ Դէհ, խաղաղ կերպով էլ վերադարձիր։ Քո աղդի սովորութեան համեմատ դու այցելել ես շատ երկիրներ և ոչ մի տեղ երջանկութիւն չես գտել, իսկ մենք, փառք Ալլահին, ծնւել ենք այստեղ և մտադիր չենք ոչ մի տեղ գնալու։ Լսիր,



իմ զաւակ. Աստծուն հաւատալուց մեծ իմաստութիւն չկայ աշխարհում։ Նա ստեղծել է տիեզերքը։ Գուցէ ինձ ասես, հեռացիր մարդ, ես քեզանից աւելի ուսումնական եմ և տեսել եմ այնպիսի բաներ, որոնց մասին դու գաղափար անգամ չունես։ Եթէ այդպէս է, այն ժամանակ կրկնակի ողջունում եմ դալուստդ, փառաբանում Աստծուն նրա համար, որ ես աւելորդութիւններ չեմ որոնում։ Դու սովորել ես այնպիսի բաներ, որոնցով ես չեմ հետաքրքրւում, որոնց ես ատում, արհամարում եմ։ Արդեօք, մեծ գիտութիւնները կարող են ստեղծել քո երկրորդ ստամոքսը և աչքերը, որ աշխատում են տեսնել ամեն բան. նրանք կարող են ցոյց տալ դրախտի ճանապարհը։

Ի՞մ բարեկամ, եթէ ուզում ես բախտաւոր լինել, բացականչիր՝ «միայն Աստուած է Աստուած»։ Մի զործիր չարիք և այն ժամանակ չես վախենալ ոչ մարդկանցից, ոչ մահից, որովհետև քո ժամն էլ կրհասնի»։

Եթէ «իմաստնագոյն քաղին» այդպէս է մտածում ու գրում, հապա ինչ պէտք է ասել հասարակ միւսլիմներից։

Այժմ տեսնենք թէ ինչ հետևանք ունեցաւ մահմեդականների այնքան սիրած ու փայփա-

յած պատերազմը։ Դա վերջ ի վերջոյ .պատուհաս դարձաւ ոչ միայն անհաւատների — քրիստոնեաների, այլ և իրանց մահմեդականների համար։ Այդ պատերազմները հաւատացեալ միւսլէմներին դարձրին մի աւերիչ-կործանիչ ոյժ, զարգացրին նրանց գաղանային բնազդը ի վնաս քաղաքացիական խաղաղ կեանքի։ Ներկայումս ամեն մի մուսլէմի համար սովորութիւն է դարձել՝ այրել, թալանել, ապրել ուրիշի հաշուով։ Ամեն երկրի, .ուր ժողովրդի մի մասը տզրուկի նման սպառում է միւսի աշխատածը, վերջ ի վերջոյ պիտի քայքայւի տնտեսապէս, պիտի կազմալուծւի։ Եւ իսլամական բոլոր երկրներն ենթարկւել և ենթարկւում են այդ պրոցէսին։

Իբրև եզրակացութիւն մեր բոլոր ասածներին՝ առաջ ենք բերում յայտնի գիտնական Ռընանի և դոքտ. Պրիդոյի հեղինակաւոր կարծիքները.

—Ով որ շատ ու քիչ տեղեակ է ժամանակակից եղելութիւններին. ասում է Ռընան. նա յայտնապէս կըտեսնի մահմեդական երկիրների այժմեան ստորացած վիճակը, Իսլամի ձեռքով կառավարւած ազգերի բարոյական—տնտեսական անկումը։ Ով որ ճանապարհորդել է



Արևելքում կամ Աֆրիկայում, նա անշուշտ կըվկայէ, որ իւրաքանչիւր մահմեդականի գլուխ ճնշւած է զուրանի երկաթեայ շղթաներով և անընդունակ է մի կարգին բան սովորելու կամ մի որ և է նոր գաղափար ընդունելու։ Մահմեդական երեխան դեռ մատաղ հասակից իր կրօնական ուսումնառութեան ընթացքում վարժւում է մոլեռանդութեան մէջ և զուրանի մի քանի սիւրաներն անգիր անելով, կարծում է, թէ արդէն ըմբռնել է ճշմարտութիւնը, գիտէ շատ բան։ Նա հպարտանում է այն ամենով, ինչ որ իսկապէս նրա թերութիւնն են կազմում։ Այդ անմիտ հպարտութիւնը իւրաքանչիւր մահմեդականի պակասաւոր կողմն է։ Իսլամի ըստ երևոյթին պարզ դաւանանքը ներշնչում է ատելութիւն դէպի բոլոր միւս կրօնները։ Ամեն մի մահմեդական հաւատացած է, թէ Աստուած առանց ուշք դարձնելու ուսման և անհատական արժանիքների վրայ՝ կըպարգևէ ում ինչ կամենայ և այդ պատճառով էլ Իսլամի զաւակները ատում են ուսումը, գիտութիւնը և այն ամենը, ինչ որ Եւրոպայի ոգին է կազմում։ Սակայն ատելով գիտութիւնը, սպանելով քաղաքակրթութիւնը, Իսլամը սպանեց իրան և

կատարեալ ստորութեան դատապարտեց իր դաւանանքը։

—Ներկայումս, ասում է դոկ. Պրիդոն, երբ ազգերի մրցման զէնքը գլխաւորապէս գիտութիւնն ու կրթութիւնն է, մահմեդական տարրը չի կարող առաջադիմել, որովհետև շղթայած է Ղուրանի կաշկանդիչ դաղափարներով. Իսլամը դաւանող պետութիւնները չեն կարող երկար գոյութիւն ունենալ, որովհետև թալանն ու կոտորածն է նրանց յատկանիշը։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
*C.C.P.A. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## ՄԵՐ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ

1. Исторія Ислама—А. Мюллера, т. I. II, III, и IV.
2. Коранъ, пер. съ арабск. Г. С. Саблукова.
3. Der Koran aus d. Arab. Dr. U. Grefeld.
4. Historisch - kritiche Einleintung in den Koran. Von Dr. Gustav Weil.
5. Исламъ въ XIX вѣкѣ—Г. Вамбери.
6. Судьба Ислама—А. Трачевскаго.
7. Отношенія Ислама къ наукѣ и къ иновѣрцамъ—Имама М. А. Баязитова.
8. Մահմեդի կեանքը—Վ. Իրվինգ։
9. Магометъ, его жизнь и ученія—К. Барсова.
10. Описаніе жизни лжепророка Магомета—Докт. Придо.
11. Магометъ—Влад. Соловьева.
12. Исламъ и наука—Э. Ренана.
13. Миссіонерскій сборникъ—вып. III, VI, VII, VIII, X, XI, XII, XIII, XIV, XVII и XIX.
14. Арабы—Д. Коробчевскаго.
15. Востокъ—П. А. Стенина.
16. Варховная власть въ исламѣ—М. Машонова.
17. Европейскіе христіане на мусульм. востокѣ—М. Машонова.
18. Права христіанъ на востокѣ—Вл. Гиргаса.

# ՅԱՂԿ


| | | Երես |
|---|---|---|
| I. | Իսլամի հայրենիքը | 5 |
| | Արաբացի (պատկեր) | 7 |
| II. | Մահմեդ | 11 |
| | Մահմեդ (պատկեր) | 15 |
| III. | Ի՞նչ է քարոզում Ղուրանը | 25 |
| IV. | Ճիհատ կամ սրբազան պատերազմ | 41 |
| | Իսլամի Խալիֆ — սուլթան Համիդ (պատկեր) | 50 |
| V. | Իսլամի աղանդաւորները | 54 |
| | Այա Սոֆիա (պատկեր) | 52 |
| VI. | Իսլամ և գիտութիւն | 67 |
| | Մեր աղբիւրները | 76 |

«Ազգային գրադարան»
NL0181247